

7275

3KM2
C-41

1929

435

6105 10/8

1082

Կ. ՅԵՆԱՎԻՆ

7

ՈՐԴԵՐ № 362

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՏՄՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՑՄԱՐԱՆ
ЦЕНТ. ДОМ КРЕСТ.
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

ՀԱՅԿԱՍՏԱՆ

3K02
Շ-41

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԲԵՎՏ.Ն. — 1929



13.07.2013

7245

3K02
C-41

14 NOV 2009

23 SEP 2006



4940-91

ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(1917 թիվ, հուլիսի 26-ից մինչև պատասխի 3-ը*)

I.

ՌՈՒՍԵՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՍԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԵՑՈՒԹՅԱՆ V ՀՄՔԳՈՒՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ VI ՀՄՔԳՈՒՄԱՐԸ

I. ՄԻՅԵՎ 1917 թվի փետրվարյան հեղափոխությունը:— Լոնդոնի V համագումարից (1907 թ.) մինչև 1917 թիվը, լերը Պետրոգրադում գումարվեց կուսակցության վեցերորդ համագումարը, առցիկ էր տաս տարի: Այդ ժամանակաշրջանում յերկիրը, առաջին հեղափոխությունյան տարիներից (1905—1907) հետո, ապրել էր անկման շրջանի տարիները (1907—1911), վերելքի և մասսայական բանվորական շարժման տարիները (1911—1914), պատերազմի շրջանը (1914-ից 1917-ը) և վերջապես փետրվարյան հեղափոխությունն 1917 թվի հուլիսյան օրերը:

Ռեակցիայի տարիներին կուսակցությունը պահպանվել էր մի ամբողջ շարք խմբավորումների: Բալչևիկները բաժանված էին յերկու մասի՝ ալյակս կոչվող ստորվիստներ և ուլախմատիստներ, վորոնք

87

*) Ամիսներն ու ամսաթիվերը ինչպես այստեղ, նույնպես և հետագայում բերված են հին տամարով:

1909 թվից կոչվեցին «վպերյոդովցիներ» (խմբակի որգանն եր «Վպերյոդ» անունով թերթը) և Լենինյան բայլշեիկներ: Մինչև ի կենսականները բաժանված էին մի քանի խմբակների՝ լիկվիդատորներ (որգանը «Գոլոս Սոցիալ-Դեմոկրատա» թերթը), կուսակցականներ (խմբված Պլեխանովի շուրջը, որգանը «Դենվինիկ Սոց.-Դեմոկրատա»), Տրոցկու «արտաֆրակցիոն խմբակը» (որգանը Վիեննայում հրատարակվող «Պրավդա»-ն): Սրանք հիմնական խմբակներն են, վորոնց մեջ չեն հաշված միջանկյալ ուրիշ խմբակներ (և ազգային կուսակցությունները, ինչպես լատիշները, լեհերը, Բուլնգը):

Այս բոլոր խմբակներից միմիայն Լենինյան բայլշեիկներն էին, վոր կարողացան 1912 թ. հունվարին Ավստրիայի Պրագա քաղաքում գումարված համառուսական կոնֆերենցիային ժողովել քսանից ավելի կազմակերպություններ, այսինքն Լոնդոնի համագումարից հետո, ժողովել Ռուսաստանի կազմակերպությունների համեմատաբար ավելի լրիվ ներկայացուցչություն և «իրենց վրա համարձակություն վերցրին իրենց կուսակցություն հայտարարելու»: Յեվ բայլշեիկներն իրավացի էին, քանի վոր մենչև ի կվիդատորների նույն 1912 թվի ոգոստոսին Վիեննայում գումարած կոնֆերենցիան, վորին ներկա էին Բուլնգի, լատիշների, տրոցկիստների և վպերյոդովցիների ներկայացուցիչները և վորտեղ բոլոր այս խմբակները ընդդեմ բայլշեիկների ստեղծեցին այսպես կոչված «ոգոստոսյան բլոկը», վերջացավ նրանով, վոր «բլոկի» մասնակիցները կովեցին միմյանց հետ, «բլոկը» շուտով քայքայվեց և վոչ մի ընդհանուր ամբողջական հետևանքի չհասավ:

1914 թվի իմպերիալիստական պատերազմը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի շարքերում նոր խմբավորումներ առաջ բերեց: Հիմնական խմբավորումները հետևյալներն էին:

1) Լենինյան բայլշեիկներ—վորոնք քարոզում էին անողոք պայքար իմպերիալիստական պատերազմի դեմ, պահանջում էին իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի, «պարտվողականություն», այսինքն վճռականապես բացասաբար էին վերաբերվում դեպի ցարական կամ կապիտալիստական «հայրենիքի» պաշտպանությունը:

2) «Նաչե Սլովոչի»*) խմբակը, վորտեղ միացած էին Տրոցկին և վպերյոդովցիների մի մասը. սրանք պայքարում էին բացարձակ սոցիալ-պաշտպանողականների դեմ, բայց միևնույն ժամանակ ունեյին մի շարք անհետևողականություններ և աջակողմյան թեքումներ, ինչպես, որինակ, «պարտվողականություն» բացասում, հույս ունեյին թե պրոլետարիատի՝ իրենց կառավարությունների վրա գործադրած «ճնշման» միջոցով հնարավոր է դեմոկրատական հաշտություն և չեյին ցանկանում վերջնականապես խզել սոցիալ-պաշտպանողականների հետ:

3) Մենչևիկներ, վորոնք իրենց կոչում էին մենչևիկ-ինտերնացիոնալիստներ (խմբված էին Մարտովի և ուրիշների շուրջը) և թեև խոսքով պայքար-

*) «Նաչե Սլովո» (մեր խոսքը) թերթը հիմնվել էր Փարիզում 1915 թվի հունվարին: Սկզբում թերթին մասնակցում էր նաև մենչևիկների պարագլուխ Մարտովը, վոր 1915 թ. սեպտեմբերին հեռացավ թերթից:

ըում ելին իմպերիալիզմի դեմ, բայց զործով, որգանապես կապված էին բացարձակ պաշտպանողականների հետ:

4) Մենչևիկ-պաշտպանողականներ, վորոնք բացարձակ կողմնակից էին պատերազմին, նացիոնալիստներ և շովինիստներ էին («Նաշե Դելո», «Նաշա Զարյա», Պլեխանովի «Պրիզիվ» թերթը և ուրիշներ): Բացի հիմնական այս խմբակներից, կային միջանկյալ և մի շարք անցողական խմբակներ:

Միակ կուռ խմբակը վորը սերտորեն կապված էր Ռուսաստանում գործող անլեզալ կազմակերպությունների հետ, վորը կառուցում և վերականգնում էր այդ կազմակերպությունները, դա Լենինյան-բայրշեիկների խմբակն էր:

2. 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո:— Լենինյան բայրշեիկները փետրվարյան հեղափոխությունը ղեկավորեցին իսկապես վորպես կուսակցություն, վորն ուներ անլեզալ կազմակերպությունների ցանց, կենտրոնական կոմիտե և կենտրոնական որգան:*) մի շարք վորոշումներ, հաստատված Ռ. Ս. Դ. բանվորական կուսակցության արտասահմանյան սեկցիաների Բերն քաղաքում գումարված կոնֆերենցիայի կողմից (1915 թ. մարտ): Մյուս խմբակները վոր մի նման բան չուներին: 1917 թ. ապրիլի Համառո սա-

*) Լոնդոնի (V) համագումարից հետո 1908 թ. փետրվարին լույս տեսավ կուսակցության «Սոցիալ-Դեմոկրատ» կենտրոնական որգանի բառչին համարը: Բայրշեիկները նրա հրատարակությունը շարունակեցին մինչև 1917 թ. հեղափոխությունը: 1917 թ. վի մարտից սկսեց հրատարակվել կենտրոնական կոմիտեի և Պետրոգրադի կոմիտեի որգանը՝ «Պրավդա»-ն:

կան կոնֆերենցիային, յերբ կուսակցությունն ուներ ընդամենը չերկու ամսից էլ պակաս լեզալ գոյության ժամանակամիջոց, անդամների թիվը հասնում էր 80 000 է, իսկ հուլիսի վերջին 200.000-ից անցել էր:

Հետզհետե, քանի սոցիալ պաշտպանողականները, մենչևիկներն ու սոցիալիստ-հեղափոխականները ավելի ու ավելի էին խորանում դեպի ուսուսական միջադաշին իմպերիալիստների պաշտպանների և նրանց աջակցողների խառատակ դերում, բայրշեիկները դեպի իրենց էին գրավում այն խմբակներին, վորոնք առաջներում թեև դուրս էին գալիս պաշտպանողականների դեմ, բայց միևնույն ժամանակ վճռականապես չէին խզում իրանց կապերը նրանց հետ և չէին միանում բայրշեիկներին:

1913 թ. Պետերբուրգում ծագած «մեծ դուրսդոնցիների» կազմակերպությունը (Յուրենևի և ուրիշներ) 1917 թ. վին աճել էր և ուներ մոտ 4000 անդամ, իր շարքերում ուներ մի շարք ամինաաչքի ընկնող աշխատողներ, ի միջի այլոց նախկին «վալերյոզովիներից» և «Նաշե Սլովոյի» կողմնակիցներից (Տրոցկի, Ուրիցկի, Լուենաշարսկի, Մանուիլսկի և ուրիշներ):

Մենչևիկ-ինտերնացիոնալիստների ձախ թևը (Լարին) հանգել էր պաշտպանողականների հետ խզելու և բայրշեիկների հետ միանալու անհրաժեշտության մտքին:

Լենինյան կուսակցության ազդեցությունը տարածվում էր ես-երներ ձախակողմյան մասի (ինտերնացիոնալիստական) և առաջին հերթին բանվորական

մասսաների-այսպէս կոչվող ձախակողմյան ես-երնե-
րի վրա*):

Մենշևիկ-ինտերնացիոնալիստներին անունից Վ
համագումարը վողջունեց կարինը, վորը շատ ճիշտ
կերպով նկատեց, թե «բայլընիկները կազմակերպու-
թյունն անկասկած հանդիսանում է Ռուսաստանի
պրոլետարիատի մեծամասնության ներկայացուցչու-
թյունը», Իսկ Պրեոբրաժինսկին, վորը առաջարկ մտ-
ցրեց համագումարն անվանել Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցու-
թյան Վ համագումար, ուներ կատարյալ իրավունք
ասելու. «Մենք, պրոլետարիատի մեծամասնության
ներկայացուցիչներս իրավունք ունենք այս համագու-
մարն անվանելու կուսակցության համագումար և
վերականգնել համագումարների թվահամարը, վորը
կորցրել են մենշևիկները**):

II.

**ՀԱՄԱՌՈՒՍԵԿԱՆ ԵՊՐԻՅԱՆ ԿՈՆՓԵՐԵՆՑԻԱՆ
ՀԻՄՆԵԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ռուսաստանի Ս. Դ. Բ. կուսակցության բայլըն-
իկների ապրիլյան համառուսական կոնֆերենցիայի

*) Պատերազմի սկզբից սոց.-հեղափոխականների կուսակցու-
թյան մնացորդների հիմնական մասան մի անգամից դարձավ
սոցիալ-պաշտպանողական: Կուսակցության պարագլուխ Ջերնովի
շուրջը կազմակերպվեց մի խմբակ («Միսլ» և «Ժիզն» թերթերը),
վորը խոսքով հայտարարել էր իրան ինտերնացիոնալիստական
բայց գործով պաշտպանողական եր: Գոյություն ուներ նաև ձախ
ինտերնացիոնալիստական թևը, վորից հետագայում առաջ յեկան
ձախ ես-երները:

**) ՎՊ համագումարի արձանագրություններից:

նշանակութունը կայանում է նրանում, վոր կուսակ-
ցությունը, հեղափոխության սկզբից, ընդամենը յեր-
կու ամսվա ընթացքում աճելով մինչև 80.000 կազ-
մակերպված անդամի, Լենինի ղեկավարությամբ ըն-
դունեց պարզ ու վորոշ վճիռներ բոլոր կարևորա-
գույն հարցերի վերաբերյալ: Այս տեսակետից ապրիլ-
յան կոնֆերենցիան, վորն ընտրեց նաև Կենտրոնա-
կան Կոմիտե*), լիակատար իրավունքով պետք է հա-
վասարագոր համարել կուսակցության համագումարին:
Յեթե ապրիլյան կոնֆերենցիայի վորոշումները
վերածելու լինենք մի շարք հիմնական հարցերի**),
մոտավորապես կտտանանք հետևյալը:

**I Միջազգային հեղափոխության պլանաչափ
գաւգացման պայմանները:**—Սոցիալիստական հեղա-
փոխության պայմանները զարգանում են անազին
արագությամբ: Զանազան յերկրների բանվորների
միահամուռ հեղափոխական գործողությունները մի-
այն կարող են յերաշխսվորել համաշխարհային սոց-
իալիստական հեղափոխության առավելագույն պլանա-
չափ զարգացումն ու հնարավոր առավելագույն ճշգ-
րիտ հաջողությունը (բանաձև «ընթացիկ մոմենտի»
մասին):

**2 Ռուսական հեղափոխության յեվ միջազգա-
յին հեղափոխության միջեվ յեղած փոխհարաբե-
ուրյունները:**—Յեթե Ռուսաստանում բանվոր դասա-

*) Կ. Կ. ընտրվեց հետևյալ կազմով՝ Լենին, Ջերնովյև,
Ստալին, Կամենև, Միլյուտին. Նոգին, Սվեբլով Սմիլգա և Ֆո-
դրով:

**) Տեղի սղության պատճառով ապրիլյան կոնֆերենցիայի
բոլոր բանաձևերը այստեղ բերել չենք կարող:

կարգը վերցնի պետական իշխանութիւնը, ձեռնարկի մի շարք միջոցներով՝ կապիտալիստներէ տնտեսական տիրապետութիւնը տապալելու և նրանց քաղաքականապես լիովին անփնաս դարձնելու, առաջարկի բոլոր ժողովուրդներին դեմոկրատական հաշտութիւն, դրանով լիակատար փոխադարձ հավատ կստեղծվի պատերազմող չեռկրներէ բանվորների, իջև և անխուսափելի կերպով կատարեն պրոլետարիատին ապստամբվել իրենց կառավարութիւնների դեմ, յետե այս վերջինները չհամաձայնվեն հաշտութիւն կնքել (բանաձև «պատերազմի» մասին):

3. 1917 թ. ռուսական հեղափոխութեան բընուրը:— Հետամնաց Ռուսաստանում, մանր-բուրժուական գյուղացիական շրջապատում, պրոլետարիատը չի կարող նպատակ դնել անմիջական սոցիալիստական վերափոխութիւնը, բայց բացարձակապես բուրժուազիայի կողմն անցնելով, պրոլետարիատը դրանով կհրաժարվի ժողովրդին բացատրելուց, վոր անհրաժեշտ է դիմել մի շարք գործնականապես հասունացած քայլերի՝ դեպի սոցիալիզմը (բանաձև «ընթացիկ մոմենտի» մասին):

4. Գործնականապես հասունացած քայլեր դեպի սոցիալիզմը:— Հողի ազգայնացումը, պետական վերահսկողութիւն (կոնտրոլ) բանկերի, ապահովագրական հիմնարկների և կապիտալիստական խոշորագույն սինդիկատների վերաբերմամբ, բոլոր բանկերի միացումը մեկ կենտրոնական բանկում, ավելի արդարացի պրոգրեսսիվ տուրգադրում յիկամուտների և գույքի, խորհուրդների կ'դմից ընդհանուր աշխատավորական պարհակի կիրառում (բանաձևեր «ընթացիկ

մոմենտի», «ագրարային հարցի» և «խորհուրդների» մասին):

5. Ռուսական հեղափոխութեան չեռկրող ետապը:— Ռուսական հեղափոխութեան չեռկրող ետապը պետք է պետական իշխանութիւնը հանձնի խորհուրդներին կամ ժողովրդի մեծամասնութեան կամքը արտահայտող ուրիշ որգանների (տեղական ինքնավարութեան որգաններ, հիմնադիր ժողով և այլն): Դեմոկրատական պրոլետարական—գյուղացիական հանրապետութիւն: (Բանաձևեր «խորհուրդների», «դեպի ժամանակավոր կառավարութիւնը վերաբերմունքի», «կուսակցութեան ծրագրի» մասին):

6. Ռուսական հեղափոխութեան չեռկրող ետապի նախապատրաստումը:— ա) Տեական նախապատրաստական աշխատանք պրոլետարական դասակարգային գիտակցութեան պարզեցման և քաղաքի ու գյուղական պրոլետարներին միացնելու՝ ընդդեմ մանր բուրժուազիայի տատանումների: բ) Աշխատանք խորհուրդների ներսում, նրանց ուժերի ամրացում, նրանց ներսում կուսակցական ինտերնացիոնալիստական պրոլետարական խմբակների համախմբում, խորհուրդների վերընտրութիւն: գ) Ինքնազուլիս գործողութիւններ տեղերում՝ (ազատութիւնների իրականացում, հակահեղափոխական իշխանութիւնների փոփոխում, կոնտրոլ արտադրութեան վրա և այլն) հեղափոխութեան նվաճումները աննպատակ ամրացնելու և լայնացնելու նպատակով: Այդ գործողութիւնները հնարավոր են միայն տեղական ազգայնակութեան մեծամասնութեան կողմնակցութիւնը հիմնավորապես գրավելու պայմանով: դ) Քանի վոր բուրժուազիան

1917 թ. ապրիլյան որերին փորձ արեց գնդակահարելու բանվորներին—անհրաժեշտ է կազմակերպել պրոլետարիատին զինելու գործը, ամենասերտ կապ հաստատել հեղափոխական բանակի հետ, հրաժարվել ժամանակավոր կառավարութեանը հավատալու քաղաքականութունից (բանաձևեր «գեպի ժաման. կառավ. վերաբերմունքի», «խորհուրդների», «ընթացիկ մոմենտի» և «ազրար հարցի» մասին):

7. Ինչով է վորոշվում ուսուսական հեղափոխության վախճանը:—Յեթե Յեվրոպայում սկսվող պրոլետարական հեղափոխութունը չի գործի Ռուսաստանի վրա իր անմիջական կարող ազդեցութունը—այն ժամանակ ուսուսական հեղափոխութեան վիճակն ու վախճանը կախված են նրանից, թե կհաջողվի արդյոք քաղաքի պրոլետարիատին իր յետևից տանել նաև գյուղական պրոլետարիատին ու նրան միացնել գյուղի կիսապրոլետարական մասսաներին, թե այդ մասսան կգնա հակահեղափոխութեան կողմնակից գյուղական բուրժուազիայի յետևից (բանաձև «ազրար. հարցի» մասին):

Այսպիսով ապրիլյան կոնֆերենցիան ուղղակի չէր դնում ժամանակավոր կառավարութեանը տապալելու նպատակով ապստամբվելու կամ ապստամբութեան համար պատրաստվելու հարցը: Գոյութուն ունեւր դեռևս յեկիեխանութուն (կառավարութունը և խորհուրդները), դրութունն անկայուն էր, իշխանութունը խաղաղ կերպով խորհուրդներին անցնելու հնարավորութունը դեռևս վերացած չէր:

Անհրաժեշտ է մյուս կողմից ուշադրութեան առնել, վոր կոնֆերենցիան գտնում էր, վոր անհրաժեշտ

է և հնարավոր է իշխանութեան անցնումը վոչ անպայման միայն խորհուրդներին: Թվում էլին նաև որ իշ կազմակերպութուններ (որինակ հիմնադր ժողով) այն դեպքում, յեթե նրանք իսկապես ընդունակ կլինեն արտահայտելու ժողովրդի մեծամասնութեան կամքը (գործնական ազիտացիայի միջոցին լայն մասսաների մեջ բացառիկ նշանակութուն ստացավ «ամբողջ իշխանութունը խորհուրդներին» լուրուսը, իսկ թե ինչու ապրիլին խոսվում էր նաև «այլ» որգանների մասին, ավելի հարմար է այդ հարցը քննել հետագայում*):

Վերջապես ուսուսական հեղափոխութեան վախճանը չէր կապվում բացառապես Արևմուտքի հեղափոխութեան հնարավորութեան հետ: Այս վերջինի զարգացումը կախված էր նրանից, թե Ռուսաստանում հեղափոխական դասակարգը կկանգնի արդյոք իշխանութեան գլուխ և իշխանութեան գլուխ կանգնելով կկարողանա արդյոք իշխանութունը պահել իր ձեռքում: Ուրիշ խոսքով—ընդունակ կլինի արդյոք քաղաքի պրոլետարիատը իր յետևից տանելու գյուղական պրոլետարական և կիսապրոլետարական տարրերին՝ ընդդեմ հակահեղափոխութեան կողմնակից գյուղական բուրժուազիայի:

III

ԳՐՈՒԹՅԱՆԸ ՅԵՐԱՐՈՒՄ ԵՊՐՄՅԵՆ ԿՈՆՓԵՐԵՆՑԻԱՅԻ ՅԵՎ VI ՀԵՄԵԳՈՒՄԵՐԻ ՄԻՋԵԿԵՍԵԼ ՇՐՋԱՆՈՒՄ

1917 թ. ապրիլի վերջից մինչև հուլիսի վերջը Ռուսաստանն ապրեց մի շարք խոշորագույն դեպքեր:

* Տես ինսյիբրորդ գլուխը:

1. Կոալիցիոն կառավարության կազմվելը 1917 թ. մայիսի 6-ին.— Եսերներն ու մենշևիկները բուրժուազիայի հետ միանալով կամ կոալիցիա կազմելով փրկեցին բուրժուական կառավարությունը: Մարտի 2-ին կազմված ժամանակավոր կառավարությունը պաշտպանում էր խորհուրդներին, վորտեղ մեծամասնությունը կազմում էին մենշևիկներն ու եսերները: Վոչինչ չանելով հեղափոխության համար, կառավարությունը կարողացել էր գաղտնի բանակցություններով կապվել անգլո-ֆրանսիական զիլլումտոներին հետ, հիմք էր դրել զեքերալների ու սպանների հակահեղափոխական կազմակերպության, սկսել էր արդյունաբերողներին ու գործարանատերերին կազմակերպել: Մասսաների ամբողջ կարողությունը կապիտալիստների կառավարության դեմ ու անհամբուրթունքը, արտահայտվեց Պետրոգրադում բանվորների ու զինվորների ապրիլի 20 - 21-ի յելույթով:

2. Հունիսի 9-ի կրիգիսը.— Սոցիալիստների մասնակցությունը կոալիցիոն կառավարության մեջ հանգավ այն բանին, վոր նրանք դարձան բուրժուական կառավարության ծառաներն ու պաշտպանները: Վոչ մի միջոց կապիտալիստներին սանձահարելու, վոչ մի քալ՝ հողային հարցը վճռելու, պատրաստություններ ֆրոնտում հարձակումն սկսելու համար, հալածանքներ հեղափոխական կրոնշտաղի դեմ, հիմնադիր ժողովի գումարման հետաձգումն: Այս բոլորի հետևանքը— ժողովրդական մասսաների նոր զժգոհություններ ու զրգոում և Պետրոգրադում բայլշևիկների հունիսի 9-ին նշանակած ցույցը: Նախապատրաստվող այս ցույցի դեմ— եսերների ու մենշևիկների

անմիջական դաշինքը կադետների հետ, նրանց լիակատար հարումը հակահեղափոխական բուրժուազիային:

3. Հունիսի 18-ի ցույցը.— Բայլշևիկների իրենց կողմից վերացրած ցույցի փոխարեն, խորհուրդներում մեծամասնություն կազմող մասը, ժողովրդական մասսաների գոնե չնչին հավատը պահպանելու նպատակով հունիսի 18-ին նշանակեց ընդհանուր ցույց: Այս ցույցին Պետրոգրադի բանվորներն ու զինվորները գուրս յեկան բայլշևիկների լողունգներով:

4. Հունիսի 18-ի հարձակումը Ֆրոնտում.— Այս հարձակումը, վոր հավանություն գտավ հունիսի 19-ին խորհուրդների համագումարի կողմից (մենշևիկներին և եսերներին ձայներով), վոչ այլ ինչ էր, յեթե վոչ բուրժուազիայի կողմից հակահարձակում ընդդեմ բայլշևիկների հեռոցհեռ աճող ազդեցության և թալանչիական սլատերազմի վերանորոգում: Պետական իշխանությունն անցել էր զինվորական վոհմակի ձեռքը, սկսվում էր մասսաների վրա բռնանալու շրջանը: Եսերներն ու մենշևիկները, հավանություն տալով այդ հարձակմանը, իրենց ավելի ևս կապեցին բուրժուազիայի հետ:

5. Հարձակման անհաջողությունը յեվ կառավարության կրիգիսը.— Ֆրոնտում հարձակումն սկսելու լսայտառակ անհաջողություն հետևանքով կադետ-միլիտարները (կարինետի մեկ յերրորդ մասը) հունիսի 2-ին հեռացան կառավարության կազմից, իբր թե ուկրայնայի հարցի ասիթով ձագած տարածայնությունների պատճառով: Իրապես, բուրժուազիան թող-

նում եր «սոցիալիստներին» իրենց մարտերու հարձակման անհաջողութեան հետևանքները և միևնույն ժամանակ մշակում եր «միատեղ» գործելու մի ամբողջ շարք պայմաններ, ավելի ու ավելի մղելով «սոցիալիստներին» դեպի հակահեղափոխութեան ուղին:

6. 1917 թվի հուլիսի 3-5-ը. — Պետրոգրադի բանվորները, վոր հեղափոխութեան սկզբի որերին իրենց մեծամասնութեամբ գնում էին ետերների ու մենշևիկների յետևից, շատ արագ կերպով սկսեցին կորցնել իրենց հավատը ինչպես դեպի կոալիցիան, նույնպես և դեպի սոցիալիստները:

Թալանչիական պատերազմը վերանորոգելու հետ միասին, կառավարութեան անգործութունից, թանգութունից, փլուզումից և ֆրոնտում սկսած հարձակումից գաղազած ժողովրդական մասսաների կատաղութունը ավելի ու ավելի աճում եր: Այդ դժգոհութունը տարերային կերպով դուրս ժալթքեց հուլիսյան որերին: Բուրժուազիան միջոցներ*) ձեռք առավ Պետրոգրադի բանվորներին ժամանակից ստաջ կռվի դուրս բերելու: Հուլիսյան շարժումը, լինելով ժողովրդական մասսաների կողմից վերջին փորձը՝ ցույցի միջոցով ստիպելու խորհուրդներին իշխանութունը վերցնել, ամեն բոլոր կարող եր վերածվել իսկական ապստամբութեան: Բայց այդ ապստամբութունը կլիներ

*) Հալածանք բայշևիկները դեմ, (հակահեղափոխական կազմակերպութեանները) աճում, հակահեղափոխական խմբերի զինված ցույցեր, Պետրոգրադից հեղափոխական զորագնդերը հեռացնելու փորձեր, Պուախովյան զորմարանի բանվորների տնտեսական պահանջները բավարարելու միջոց և այլն:

16 ՕՏԵՆ

անկազմակերպ և վոր գլխավորն է վաղաժամ, քանի վոր նրան կողմնակից չէին լինի ֆրոնտը, գլուղացիութունն ու տեղերը: Բայշևիկները կարողացան խանգարել Պետրոգրադի արյունահեղութունը և սկսվող անկազմակերպ ապստամբութունը վերածեցին կազմակերպված ցույցի:

7. Հեհուլիսյանց հակահեղափոխութունը. — Հուլիսյան դեպքերից հետո սահմանվում է զինվորական խմբակի ղեկաատուրա: Պետրոգրադը խաղաղացվում է ֆրոնտից կանչված զորքերի ոգնութեամբ: Բանվորներն ու հուլիսի ցույցին մասնակցող զորագնդերը զինաթափված են:

Լենինը և Ջինովյեվը մեղադրվում են հոգուտ գերմանիայի լրտեսութեան մեջ և հրաման է տրված նրանց ձերբակալելու*): Փակվում են բայշևիկյան թերթերը և տակն ու վրա է արվում «Պրավդա»-ի տպարանը: Ձերբակալվում են Ը. Ը. Լուսնաչարսկին, Կամենսկը, Տրոյ կին, հարյուրավոր աշխատողներ Պետրոգրադում և հազարավոր գավառներում: Ինքնադատաստաններ փողոցներում: Բայց և միևնույն ժամանակ հուլիսյան դեպքերից հետո պարզվում է, վոր հակահեղափոխութեան ուժերը անբավարար են Պետրոգրադի բանվորներին և բայշևիկներին լիովին քայքայելու համար: Հուլիսյան որերի ճնշումներից հետո բանվորները շատ արագ կերպով իրենք իրենց ժողովում են: Հավասարապես չի հաջողվում ստիպել բայշևիկներին վերջնականապես ընդհատակյա աշխատանքի անցնել:

*) Ինչպես հարցի էր, ընդ լենինն ու Ջինովյեվը պարզված էին թագավոր:



IV.

ԿՈՒՍԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ VI ՀՄԵՆԳՈՒՄԱՐԻՆ

1. Կուսակցության անգամների աճումը — Այլ-րիլի կոնֆերենցիայից հետո յերեք ամսվա ընթացքում կազմակերպութունների քանակը կրկնապատկվել էր, իսկ անդամների թիվը յերկու և կես անգամ ավելացել էր*): Ամենախոշոր կազմակերպութուններն էլ են Պետրոգրադ՝ մոտ 40,000 Մոսկվա՝ 15,000 Իվանովովոզնեսենսկ՝ 5,400 և այլն: Առանձին կազմակերպութունների աճումը այդ 3 ամսվա ընթացքում — Պետրոգրադը 16,000-ից հասել էր 36,000-ի: Մոսկվան՝ 7,000-ից — 15,000-ի, Մոսկվայի շրջանը՝ 8,000-ից — 42,000-ի, Ուրալը՝ 15,500-ից հասել էր 22,000-ի:

2. Եսերների ու մեհեպիկների համեմատական ուժերն յեվ ազդեցությունը. — Պետրոգրադում մենշևիկներն ունեյին մոտ 8,000 անդամ**), Մոսկվայում՝ եսերներն ունեյին 5,000 անդամ, իսկ մենշևիկները 4,000 անդամ, Մոսկվայի շրջանում եսերները — 14,000 անդամ: Եսերները և մենշևիկները ազդեցութունը աննշան էր Դոնի շրջանում, թույլ էր Միջին Միբրիայում, բայց ուժեղ էր Ուրալում և Անդրկովկասում: Խոշոր կազմակերպութուններ կային կենտրոնական Ռուսաստանում: Եսերո-մենշևիկյան ազդեցութունը անանձնապես ուժեղ էր զինվորական մասսաների վրա:

*) Համագումարին ներկայացված էին 177,000 կուս. անդամներ, բայց մի շարք պատգամավորներ չէին կարողացել համագումար դար:

**) Եսերներն ավելի ունեյին, բայց նրանց մոտ կային «ով առևս, բայց բանվորներից»:

3. Կուսակցական առխառնեք բալլեպիկյան կազմակերպությունների մեջ — Հիմնական թերութուններն էին. խոշոր թափ պահանջող աշխատանքի համապատասխան կուսակցական ուժերի բացակայություն: Այստեղից ծագում էր — հեռացող ինտելիգենտների փոխարեն բանվորներից կուսակցական աշխատավորների նոր կազմեր պատրաստելու ծայրահեղ անհրաժեշտութունը: Թերթերի ու հանդեսների տիրաժը փոքր էր (ընդամենն 41 թերթ, վորոնց ամենորյա տիրաժը հասնում էր 320 հազարի, իսկ հուլիսյան դեպքերից հետո այդ էլ կիսով չափ պակասեց*): Նոր աշխատողներ, կազմակերպչներ և ազիտատորներ պատրաստելու համար դասընթացների բացումը նոր նոր էր սկսվում տեղերում: Կուսակցության ֆինանսները նվազ էյին, մուծումները թույլ: Շատ դժվար էր տեղերում դրամ գտնել սեփական տպարաններ կազմակերպելու համար:

4. Կուսակցությունը յեվ բանվոր դասակարգը. — Պետրոգրադում բալլեպիկները համարյա ամբողջովին տիրապետել էին բանվոր դասակարգին: Մոսկվայում բանվորական մասսաների համակրութունը բալլեպիկների կողմն էր: Դոնի ավազանում գերակշռող ազդեցութունը բալլեպիկական էր: Թույլ էր Ուրալում և Վոլգայի շրջանում (այստեղ բալլեպիկներն ուժեղ էյին միայն պրոլետարական կենտրոններում): Անդրկովկասում բանվորները պնդում էյին մենշևիկների լեռակից:

*) Կոտավորական հարածանքների հետևանքով, փակվել էր նույնիսկ կենտկոմի օրդանը՝ «Պրավդա»-ն:

5. Կուսակցութիւնը յեվ գիճվորակաց մասնաճիւղերը.—Ռուս. Ս. Գեմ. Բանով. կուսակցութեան (բայլշէկիներէ) համառուական գիւնվորական կազմակերպութիւնը հունիսի կեսերին իր շարքերում հաշվում եր 26.000 կազմակերպված անդամ: Բայլշէկիներէի ազդեցութիւնը բացառիկ չափով խոշոր եր Պետրոգրադում, Կրոնշտադում և 12-րդ բանակի լատիշական բաժանումներում: Վաս եր Արևմտյան Ֆրոնտում, Ֆինլանդիայում և Ուրալում: Ռուսիական Ֆրոնտում թեև ախրում եր տարերային բայլշէկիյան տրամադրութիւն, բայց հնարավոր եր լինում բանաձևեր ընդունել ընդդէմ «պրոլետար-բայլշէկիներէ»:

Ընդհանրապես պատկերը խայտաբղետ եր, վորտեղից և առաջ եր գալիս գիւնվորական մասսաների մեջ խոշոր աշխատանք տանելու անհրաժեշտութիւնը:

6. Կուսակցութիւնը յեվ գյուղացիութիւնը.—Այստեղ, ընդհակառակը, բավական միատարր եր պատկերը.—կուսակցութեան կապը գյուղացիութեան հետ շատ թույլ եր և բայլշէկիյան ազդեցութիւնը գյուղացիական մասսաների վրա լիովին անբավարար: Համարյա թե բացառութիւն եյին կազմում կուսակցութեան հաջող աշխատանքը Մինսկի նահանգի բարակներէ մեջ և Միջին Միբրիւայի մի շարք գյուղական սոց. դեմոկրատական կազմակերպութիւնները: Շատ տեղերում դեռ «բայլշէկ» խոսքը գյուղացիներին վախեցնում եր, իսկ գյուղացիներէ մեջ աշխատողներ չկային:

7. Կուսակցութիւնը յեվ յերիտասարդական միութիւններն ու աշխատավորուհիներէ կազմակերպութիւնները.—Պետրոգրադում յերիտասարդական միութիւնը

ժյուներ իր շարքերում հաշվում եր 50.000 անդամ, բայց ընդհանուր առմամբ, բանվոր յերիտասարդութեան տարերային շարժմանը կուսակցութիւնը մոտեցավ միմիայն ՎՍ համագումարում: Թույլ եյին նույնպես աշխատավորուհիներէ կազմակերպութիւնները:

8. Կուսակցութիւնը յեվ խորհուրդները.—Այն միջոցին, յերբ Կրոնշտադում, Միջին Միբրիւայում, Մոսկվայի շրջանում, Մոսկվայի քաղաքային տասը շրջաններից վեց շրջանում ու միքանի այլ տեղերում ամբողջապես իրականացած եր խորհուրդներէ իշխանութիւնը, Պետրոգրադում բայլշէկիները նվաճել եյին միմիայն խորհրդի բանվորական սեկցիան, Մոսկվայում՝ ընդհանուր քաղաքային միութեան մեջ բայլշէկիները փոքրամասնութիւն եյին կազմում, Ֆինլանդիայում, Պովոլժիայում և Դոնի շրջանում խորհուրդները հսկաներէ ու մենշէկիներէ ձեռքին եյին: Միքանի տեղերում խորհուրդները չունեյին իրենց նախկին ազդեցութիւնը բանվորական մասսաների վրա և կորցրել եյին իրենց հեղինակութիւնը:

9. Կուսակցութիւնը յեվ պրոմիտիութիւններն ու գործարկումները.—Այստեղ բայլշէկիյան ազդեցութեան գերիշխանութեան միատարր պատկերն ե ասենուրեք. մի շարք վայրերում բանվորները իրենց կոնտրոլին են յենթարկում գործարանները: Պետրոգրադի և Մոսկվայի գործարկումներէ կոնֆերենցիայում բայլշէկիները մեծամասնութիւն են կազմում և առանձին հաջողութեամբ ընդունվում ե բանվորական կոնտրոլի հաստատելու առաջարկը:

10. Կուսակցութիւնը յեվ Մուհիցիպալ կամպանիան.—Քաղաքային ինքնավարութիւններում բայլշէկի

վիճակները նվաճել էյին ձայներէ 12-ից մինչև 20 0/0 և յերբեմն նույնիսկ ամբողջ բայտնական ինքնավարութիւններ (որ. Վիբորգի բայտն Պետրոգրադում) Բալլընիկներն ազդեցութիւնը այստեղ աճում է, բայց մնայուն մեծամասնութիւնը այնուամենայնիվ պատկանում է եսերներին ու մենչնիկներին:

II. Հուլիսի 6 գեպեեր յեվ Երանցից հետո.—Մի քանի տեղերում (Մոսկվա, Կրասնոյարսկ) կազմակերպվեցին բանվորական կամ բանվորա-դինվորական ցույցեր: Վորպես կանոն՝ վորոշ շփոթութիւնից ու տատանումներից հետո, նորից սկսվում է աճել կազմակերպութիւնների անդամների թիվը և նույնիսկ մի քանի տեղերում եսեր բանվորները անցնում են բալլընիկներն կողմը:

Ընդհանրապես տեղերից ստացված սեղեկութիւնները վկայում են բանվորական մասսաների արամադրութեան վոշ թե անկման, այլ ընդհակառակը նշում են նոր վերելք:

V.

ՀԱՄԱԳՈՒԹԱՐԻ ՈՐԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑԵՐ. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ. ԸՆԿ. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՅԵՎ ԶԻՆՈՎՅԵՎԻ ՆԵՐԿԱՅԱՆՍԵՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

6-րդ համագումարն աշխատում էր կիսալեզակ դրութեան մեջ: Աշխատանքի պայմաններն այնպես էին, վոր համագումարը ստիպված էր իր նիստերն տեղերը հաճախ փոփոխել: Նախնական որակարգը ընդունված էր 12 կետից. 1) կազմակերպիչ բյուրոյի գեկուցումը, 2) ՌՄԻԲԿ Կենտկոմի գեկուցումը, 3) հաշ-

վիտութիւններ տեղերից, 4) ընթացիկ մոմենտ-պատերազմը և միջազգային դրութիւնը, քաղաքական և տնտեսական դրութիւնը, 5) ծրագրի վերանայումը, 6) կազմակերպչական հարցեր, 7) Հիմնադիր ժողովի ընտրութիւնները, 8) Ինտերնացիոնալ 9) կուսակցութեան միացումը, 10) պրոֆեսսիոնալ շարժումը, 11) ընտրութիւններ, 12) զանազան:

Համագումարը քննութեան յենթարկեց և վորոշումներ ընդունեց համարյա բոլոր հարցերի առթիվ: Բայց նրանցից վճրը կենտրոնական հարց դարձավ, յերկար վիճարանութիւնների առթի տվեց ու ամենից շատ զբաղեցրեց համագումարին: Անշուշտ ընկ Ստալինի գեկուցումը՝ քաղաքական դրութեան մասին, վորովհետև այստեղ հարց էր դրվում տակտիկական լողունգի փոփոխութեան մասին՝ պատմութեան այն հանկարծական օրագրի միջոցին, վորը կապված էր Պետրոգրադի հուլիսյան դեպքերի հետ: Այս գեկուցման հետ միասին հիմնական դարձան նաև «ընթացիկ մոմենտը և պատերազմը» (գեկ. ընկ. Բուխարին) և «տնտեսական դրութիւնը» (գեկ. ընկ. Միլյուտին) գեկուցումներն ու նրանց առթիվ ընդունված բանաձևերը:

Նախ քան այս հարցերի քննութեան անցնելը, համագումարը վորոշում ընդունեց կենտրոնական կոմիտեյի հաշվետվութեան մասին և վճռեց, վոր ընկ. ընկ. Լենինն ու Զինովյիվը չպեաք է ներկայանան իշխանութեանը*):

*) Բացի այդ համագումարը լսեց, ճիշտ է զանազան նիստերում, քսան գեկուցում տեղերից և Բազիլի Բուսուլմանական «Հումմեթ» կազմակերպութեան գեկուցումը:

Կենտկոմի քաղաքական հաշվետվութեան մե
 ընկ. Ստալինը մասնաձեռքով, վոր բուրժուազիայի կազ
 մակերպվելը և նրա նախապատրաստութուններ
 դուրս գալու հեղափոխութեան դեմ, ծագում են հե
 տեյալ փաստից. ուստիան հեղափոխութեանն իր գոր
 ցացման ընթացքում սկսել է ընդունել սոցիալիստական
 բանվորական հեղափոխութեան բնույթ: Սակայն մինչ
 բուրժուազիայի բացարձակ հրապարակ գալը կուսակ
 ցութեանը չի առաջադրել իշխանութեանը գրավելու
 հարցը: «Խորհուրդների նվաճումը վերընտրութուն
 ներքի միջոցով» լուրենգը համապատասխանում էլ
 ուստական հեղափոխութեան խաղաղ շրջանին, վորը
 վերջավորութեանը սկսվում է արդեն հունիսին, յերբ
 բուրժուազիան և «սոցիալիստները» պատրաստվում
 են Ֆրոնտում հարձակումն սկսելու: Կենտկոմի համար
 հունիսի 9-ից և 18-ից հետո պարզ էր բուրժուազիայի
 ձգտումը՝ ստիպելու բանվոր դասակարգին դուրս գա
 լու վաղաժամ կռվի: Ինքը կենտկոմն աշխատում էր
 սպասել մինչև Ֆրոնտում սկսած հարձակումը վերջ
 նականապես կտապալվի, բայց, քանի վոր չհաջողվեց
 պահել մասսաների տարերային լեռույթը հուլիսին,
 կուսակցութեանն իր պարտքը համարից խառնվել
 շարժմանը, մնալ մասսաների հետ և կանխել արյուն
 հեղութեանը:

Վիճաբանութեանները միջոցին լսվում էին մե
 դադրանքներ կենտկոմի հասցեյին, թե նա՝ յերույթը
 կատարել է առանց գավառների կարծիքը հարցնելու,
 վոր կենտկոմը նկատի չե առել միմիայն Պետրոգրադի
 պայմանները, վոր անհաջողութեանը հետևանք է նրա,
 վոր «Պետրոգրադը չհզոքացել է տեղերից» (Պրեկո-

րաթենակի): ընկ. Ստալինն իր չեղրափակման խոսքի
 մեջ առարկում էր, վոր չեթե կենտկոմը դիմեր «տե
 դերին հարցնելու» միջոցին, այն ժամանակ նա իր
 բանաձևերի մեջ պիտի խոսեր արդեն կատարված
 փաստերի մասին միայն, պիտի քաջ գար նրանց հե
 տեկից և չեր լինի այլևս կենտկոմ, վորպես այդպիսին:
 տեղերից կտրված լինելու հանդիմանութեանը հիմքից
 դուրկ չե, բայց Պետրոգրադումն է այժմ դարձվում
 քաղաքականութեանը և այստեղ է հեղափոխութեան
 կենտրոնը: Խոսել կուսակցութեան անհաջողութեան մա
 սին հուլիսյան օրերին չի կարելի, հեղափոխութեան
 անհաջողութեանը բացատրվում է մանր-բուրժուակա
 սոցիալիստների դավաճանութեամբ և ընդհանուր
 Ֆրոնտի ձեղքումով:

Կենտկոմի հասցեյին մեղադրանքներ այն մասին,
 վոր նա ըստ ելութեան հանդիսանում էր Պետերբուրգի
 կոմիտե, թույլ էր աշխատում գավառների համար, նը
 բանց հետ քիչ է կապված—լսվում էին նաև կենտկո
 մի կազմակերպչական հաշվետվութեանը քննելիս: Զե
 կուցողն էր Սվերդլովը, վորը շատ հեշտութեամբ հե
 մկեց այդ բոլոր մեղադրանքները, իսկ համագումարն
 իր բոլոր ձայներով, հինգ հոգու ձեռնպահութեամբ, իր
 յերկրորդ նիստում հավանութեան տվեց կենտկոմի
 հաշվետվութեանը Ռ. Ս.-ի. Բ. կուսակցութեան քա
 ղաքական գործունեութեան և բանվոր դասակարգի
 քաղաքական լեռույթների ղեկավարման գործում*):

Ընկ. Ստալինի առաջարկութեամբ ընտրվեց
 հանձնաժողով, վորին հանձնարարվեց կազմել մասն-

*) Համագումարի արձանագրութեանները:

Ֆեստ՝ ուղղված ազգաբնակչությանը և կոչ՝ Արևմուտ-
 ցան Յեվրոպայի բանվորներին ու զինվորներին: Սա-
 կայն համագումարը ժամանակ չունեցավ կազմելու
 այդ գոկումենտները և նրա հանձնարարութեամբ
 կենտկոմը հրապարակեց հետագայում միայն Ռուսաս-
 տանի բոլոր աշխատավորներին, բոլոր բանվորներին
 զինվորներին և գյուղացիներին ուղղված կուսակցու-
 թյան մանիֆեստը:

Ընկ. ընկ. Լենինի և Զինովյեվի ներկայանալու
 առթիվ համագումարը միանգամայն համաձայնվեց
 նրանց դիտավորութեան հետ՝ չհպատակվել ժամանա-
 կավոր կառավարութեան հրամանին նրանց ձերբակա-
 լելու մասին, քանի վոր «ներկա մոմենտում Ռուսաս-
 տանում ճշմարիտ դատավարութեան վոչ մի չեքաշ-
 խիք չկա» (հուլիսի 15 ին ընկ ընկ. Լենինն ու Զի-
 նովյեվը հրապարակեցին իրանց «նամակն ընկերներին
 ուղղված»): Համագումարի և վոչ մի պատգամավոր
 չհայտարարեց թե ը.ը. Լենինն ու Զինովյեվը ոխալ են
 վարվել խուսափելով բանտարկութեանից: Բայց ըն-
 կերների մի մասը (Վոլոդարսկի, Բեզբարտոնի, Լաշկիչ)
 հարցը սխալ ելին դնում, չեք հայտարարում ելին, թե
 Լենինի պրոցեսսով կուսակցութեանը պետք է ճակա-
 տամարտ տա հակահեղափոխութեանը, վոր ը.ը. Լե-
 նինին ու Զինովյեվին կտրելի չե թուլատրել հանձնու-
 վելու իշխանութեան ձեռքն անձական լիակատար ա-
 պսոփութեան, դոնրաց դատավարութեան, չեղզվալ-
 ների դատարանով դատելու և այլն պայմանով միայն:
 Ընկ. Բախ սրինը բոլորովին ճիշտ կերպով նկատում
 էր, վոր չեթե հեղափոխութեան հետևանքը լինելու
 չե «մի ինչ վոր թշվառ մեղչանական հանրապետու-

թյուն», ապա ազնիվ դատարանի մասին վոչ մի խոսք
 լինել չի կարող: Իսկ չեթե հաղթանակի խորհուրդնե-
 ըի հանրապետութեանը, ապա ինքն ըստ ինքյան վե-
 բանում է դատաստանի հարցը:

VI

**ԶԵԿՈՒՅՈՒՄ ՅԵՎ ԲԸՆԵՉԵՎ ԸՆԹԵՑՈՎ ՄԷՄԵՆՏԻ
 ՅԵՎ ՊԵՏԵՐԵՉՄԻ ՄԷՄԵՆՏ**

Ընկ Բախարինի զեկուցման կենտրոնական միտ-
 քըն այն էր, վոր եսերների ու մեղչելիների կողմնակ-
 ցութեանն ուսական և միջազգային բուրժուազիային
 և նրանց միատեղ չեկույթը ընդդեմ ուսական հեղա-
 փոխութեան, բղխում են գյուղացու բնութեանից,
 վորպես սեփականատեր, գյուղացին չի կարող միջազ-
 գային տեսակետի վրա կանգնել, իսկ կանգնելով
 պաշտպանողական տեսակետի վրա, նա անխուսափելի
 կերպով պետք է բլիկ կազմի ուսական և միջազգա-
 չին իմպերիալիզմի հետ:

Այդ բլիկը նշանակում է, վոր Ռուսաստանը,
 վորպես հեղափոխութեան հնոց ժամանակավորապես
 դադարել է գոյութեան ունենալուց:

Սակայն հակահեղափոխութեան հաղթութեանը
 Ռուսաստանում ժամանակավոր է, քանի վոր գյու-
 ղացին դեռևս հող չի ստացիլ և նրա դաշինքն իմ-
 պերիալիստների հետ անխուսափելի կերպով պետք է
 խզվի: Համաշխարհային մասշտաբով պատերազմի շա-
 բունակութեանը խորացնում է համաշխարհային հե-
 ղափոխութեան ծագման ու նրա պարզացման պայ-

մանները: Ստեղծված դրությունից դուրս գալու միակ
 յեղքը համաշխարհային սոցիալիստական հեղափոխու-
 թյունն է: Բայց, այն դեպքում, յեթե բանվորա գյու-
 դացիական հեղափոխությունը Ռուսաստանում հաղ-
 թի նախ քան հեղափոխությունը կրճնկվի Արևմուտ-
 քում, այն ժամանակ մենք ստիպված պիտք ե լինենք
 հեղափոխական պատերազմ վարել, հարձակողական
 կամ պաշտպանողական պատերազմ և այդ պատերազ-
 մով վառել համաշխարհային սոցիալիստական հեղա-
 փոխության հրդեհը:

Զեկուցման մեջ չեք հիշվում գյուղացիության
 դանազան խավերի, այսինքն նրա վերին և ստորին
 շերտերի մասին: Ընկ. Ոսինսկին վիճարանություննե-
 րի միջոցին կասկած հայտնեց այն մասին, թե վոր-
 քան ճիշտ է, վոր գյուղացին սեփականատեր լինելով
 անպայման հակված պիտի լինի պաշտպանողական
 տեսակետին: Ընկ. Բուխարինը սրան անմիջապես
 պատասխանեց, վոր ուսական հեղափոխության վեր-
 ջին հտապում գյուղացիության չքավորագույն շեր-
 տերը բանվոր դասակարգի դաշնակիցները կլինեն:
 Այնուհետև այն միտքը, թե Ռուսաստանը հուլիսի
 4-ից հետո ժամանակավորապես դադարել է վորպես
 հեղափոխության հնոց գոյություն ունենալուց ստի-
 պեց վիճարանություններին դուրս գալ ընկ. ընկ.
 Սմիլգային և Խարիտոնովին, վորոնք զեկուցումից
 այն տպավորությունն էլին ստացել, թե ուսական
 հեղափոխության վրա խաչ է դրվում և մնում է մի-
 միայն համաշխարհային պրոլետարական հեղափոխու-
 թյան հնարավորությունը:

Առանձին հանձնաժողովում մշակելուց հետո այս

առթիվ ընդունած բանաձևը ճշտեց զեկուցման առան-
 ձին տեղերը, և վերջնականապես ու լիովին ճշգրիտ
 ձևակերպեց թե շարունակվող իմպերիալիստական պա-
 տերազմի բնույթը և թե պրոլետարիատի կուսակցու-
 թյան առաջ դրված խնդիրները Ռուսաստանում (բա-
 նաձևն ընդունվեց ոգոստոսի 2-ի յերեկոյան նխստում
 միաձայն):

Բանաձևը հաստատում էր, թե քանի վոր պատե-
 րազմին սկսել են մասնակցել նոր չերկիրներ և վո-
 րովհետև բուրժուազիան աշխատելու յե պայքարել
 հասունացող պրոլետարական հեղափոխության դեմ,
 ապա նա անխուսափելիորեն պիտք է աշխատի տես-
 կան դարձնել պատերազմը: Այնքան, վորքան ուսա-
 կան հեղափոխությունը սպառնում է պատերազմի և
 իմպերիալիզմի դեմ մղած պայքարին մասնակից անել
 նաև մյուս յերկրների պրոլետարական մասսաներին,
 համաշխարհային բուրժուազիան հարձակումն սկսելով
 ճակատում, դրանով իսկ ուզեց հարձակման զխմել
 ընդդեմ ուսական հեղափոխության, իսկ մանր բուր-
 ժուազիայի և գյուղացիության վերին շերտերը, նը-
 բանց հետ միասին նաև բանվորների մանր-բուրժուա-
 կան իլլուզիաներից չազատված մասը գերի ընկան իմ-
 պերիալիստական խոշոր բուրժուազիային:

Բանաձևն այնուհետև նշում էր, վոր պատերազ-
 մի շարունակությունն անխուսափելիորեն ստեղծելու
 յե պայմաններ պրոլետարական հեղափոխության
 ծագման համար և վոր միայն մասսաների հեղափո-
 խական պայքարը—միջազգային պրոլետարիատի հե-
 ղափոխությունը—կարող է բերել դեմոկրատական
 հաշտության: Իշխանության գրավումը միջազգային

պրոլետարիատի կողմից, իսկ Ռուսաստանում բան-
վորները և չքավոր գյուղացիութան կողմից—անա-
միակ միջոցը պատերազմին վերջ տալու հոգուտ ժո-
ղովրդական մասսաների: Այն չերկիրը, վորն առաջինը
կերպագործի պրոլետարների և կիսապրոլետարների դիկ-
տատուրան, պետք է ամեն տեսակ ոգնություն (մին-
չև իսկ զինված ոգնություն) հասցնի ուրիշ չերկրների
պաշքարող պրոլետարիատին:

Բանաձևը մատնանշում էր, վոր այսպիսի խնդիր
կարող է զրվել Ռուսաստանի առաջ, յեթե, վոր շատ
հավանական է, սուսական հեղափոխության նոր, ան-
խոստափելի վերելքը բանվորների և չքավոր գյուղա-
ցիների ձեռքը հանձնի իշխանությունը ավելի առաջ,
քան հեղափոխությունը կծագի Արևմուտքում:

VII

ՉԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎ ԲԵՆԸՉԵՎ ՔԵՂԵՔՆԵՆ ԿՐՈՒԹՅԸՆ ՄԵՍԻՆ

Պատերազմի և ընթացիկ մոմենտի մասին բա-
նաձևը շատ հնարավոր էր համարում, վոր Ռուսաստա-
նում բանվոր դասակարգը և չքավոր գյուղացի-
ները պետական իշխանությունը կնվաճեն ավելի ա-
ռաջ, քան հեղափոխությունը կրոնկվի Արևմուտքում:
Բանաձևը այդ հնարավորությունը կապում էր ուս-
սական հեղափոխության նոր անխոստափելի վերելքի
հետ: Բնական է, վոր այն հարցը, թե այժմ, հակահե-
ղափոխության այս ժամանակավոր հաղթանակի մո-
մենտին ինչ տակտիկայի հետևել, ինչ լոզունգներ տա-
մասսաներին կազմակերպելու ու նախապատրաստելու

այդ նոր անխոստափելի վերելքի համար—այս հարցը
պետք է լինել կարևորագույն հարց:

1917 թ. հուլիսին ՌՄԴԻ կուսակցության կրոն-
շտադի կոմիտեյի հրատարակությամբ լույս տեսավ
ընկ. Լենինի բրոշյուրը «Դեպի լոզունգները» (К лозун-
гам):

Պատմության հանկարծական խիստ շրջադարձի
միջոցին, ասում էր ընկ. Լենինը, պետք է կարողանալ
գտնել նոր լոզունգներ և չկառչել հնացած լոզունգնե-
րին: Յուրաքանչյուր մի հեղափոխության արմատա-
կան հարցը—իշխանություն հարցն է: Յեթե այդ
իշխանությունը առաջ բաժանում է յին ժամանակավոր
կառավարությունն ու խորհուրդները, յեթե այն ժա-
մանակ կարելի էր խոսել հեղափոխության խաղաղ
զարգացման մասին և առաջադրել ամբողջ իշխանու-
թյունը խորհուրդներին լոզունգը, ապա հուլիսի 4-ից
հետո պետական իշխանությունն անցել է զինվորական
քլիկի ձեռքը, վորին պաշտպանում են բուրժուազիան՝
կապետների կուսակցության գլխավորությամբ, բոլոր
մոնարխիստների հետ միասին: Այդպիսի իշխանությունը
պետք է տապալել: Խորհուրդները չ'որհիվ եներները
ու մենշևիկների տիրապետության լիովին սնանկացել
են, ներկայումս անզոր ու անողնակա են և իշխա-
նությունը հատկապես այսպիսի խորհուրդներին հանձ-
նելու հասարակ լոզունգը կլինել այժմ ամենավտան-
գավոր խաբերալուծություն: Որվա լոզունգն է—վնո-
ական կռիվ բնդդեմ իշխանությունը գրավող հակահեղա-
փոխության: 1917 թ. հուլիսի փորձից հետո հեղափո-
խական պրոլետարիատը պետք է ինքնուրույն կերպով իր
ձեռք վերցնի պետական իշխանությունը: Մրանից դուրս

չի կարող լինել հեղափոխութեան հաղթութեան: Պոլիտեխնիկսի իշխանութիւնն չհավոյ գյուղացիութեան յեղկիսապարտիտեաների ոգևորչամբ— ահա միակ յեղբը:

Ընկ. Ստալինը իր քաղաքական դրութեան մասին տված զեկուցման մեջ զարգացրեց ընկ. Լենինի այս մտքերը, զեկուցման առթիվ վիճարանութեանն երբ խիստ տաքացան:

Զեկուցման առթիվ արտահայտողների մեջ յերևան յեկան ճիշտ և զանազան գունավորումներով, յերեք հիմնական հոսանքներ, ա) հին՝ «ամբողջ իշխանութեանը խորհուրդներին» լողունգի կողմնակիցներ, բ) հին լողունգը վերացնելու կողմնակիցներ և գ) հոսանք, վոր համաձայն չիւր վոչ առաջնի և վոչ յերկրորդի հետ:

«Ամբողջ իշխանութեանը խորհուրդներին» լողունգի կողմնակիցներն առարկում ելին ընկ. Ստալինին դիտարկութեան հետևարում:

ա) Ընկ. ընկ. Անգարսկին ու Պրեոբրաժենսկին — գտնում ելին, «թոխքը բուրժուական հեղափոխութեանից զեպի սոցիալիստականը, Ռուսաստանի սոցիալիստական վերակառուցումը, կապված և Արևմուտքի պրոլետարական հեղափոխութեան հետ»: Վերջապահին գտնում եր, վոր սմեր հեղափոխութեանը ավելի չէ, քան բուրժուական հեղափոխութեանը, բայց նա սոցիալիստական հեղափոխութեան չէ»

բ) Հին «ամբողջ իշխանութեանը խորհուրդներին» լողունգի վերացումը և նրա փոխարինումը «պրոլետարիատի և չքավորագույն գյուղացիութեան զիկատտուրայի» լողունգով, վտանգավոր և այն տեսակետից, վոր նա պրոլետարիատին կչեղոքացնի գյուղա-

ցիութեանից և սոցալաքնակութեան լայն խավերից (Յուրենև, Մանուիլսկի):

գ) Յեթե հեղափոխական ուժերի միացման համար հարկավոր և վորևե կենտրոն, յեթե հեղափոխութեան հաջողութեան համար անհրաժեշտ և նախատեսել պայքարի կազմակերպչական ձևեր, յեթե խորհուրդները լողունգը հանդիսացել և հեղափոխութեան շարժիչը (մղիչ), ապա և անհրաժեշտ և պահպանել այդ լողունգը (Յուրենև, Չափարիձե, Նոյին):

դ) Իշխանութեանը խորհուրդներին հանձնելու լողունգի վերացումը կարող և առաջ բերել ուրիշ լողունգ— «կորչեն խորհուրդները»:

Ընկ. Բուխարինը արտահայտվեց թե հին լողունգի կողմնակիցները և թե նրա հակառակորդների գեմ: Հեղափոխութեան նոր անխուսափելի վերելքի միջոցին կլինեն յերկու շրջաններ՝ առաջինը գյուղացիութեան մասնակցութեամբ և յերկրորդը՝ չերբ գյուղացիութեանը ստանալով հող, կհեռանա և Ռուսաստանի պրոլետարիատին կոգնեն միմիայն պրոլետարական տարրերն ու Արևմտյան Յեվրոպայի պրոլետարիատը: Հեղափոխութեան այդ յերկու շրջանների համար, քանի վոր նրանք կարող են անմիջապես միմիանցից մտտ լինել, հակահեղափոխութեան զիկատտուրայի տապալման միակ լողունգը բավական չէ, անհրաժեշտ և տալ նաև այնպիսի լողունգ, վորը վորոշում և առաջարկում յեղափոխութեան ձևը: Յեթե իշխանութեանը չի կարելի հանձնել Արևելայի եսեր-մենչևիկական խորհուրդներին, ապա հարկավոր և տալ իշխանութեանը բայլչևիկական խորհուրդներին հանձնելու և մնացած խորհուրդները վերջնապես իշխանութեան յեղափոխութեանը լողունգը:

Հեղափոխութեան նոր վերելքի միջոցին կկազմակերպուին նաև նոր խորհուրդներ:

Մի շարք հետտորներ (Միլլլուտին, Սոկոլնիկով, Զալուցկի, Սմիլգա, Մոլոտով, և Բուրնով) պաշտպանում ելին հին լողունը վերացնելու անհրաժեշտութիւնը, իսկ ընկ. Ստալինը իր յեզրափակման խոսքում պատասխանեց իրեն առարկող ընկերներին, վոր ներկայումս հարցը վերաբերում է վոչ թէ իշխանութիւնը դեռ բայլիկներին ձեռքում չէ, այլ նրան, թէ վոր դասակարգին է տրվում իշխանութիւնը և հասունացել է արդո՞ք բանվոր դասակարգը դիկտատուրայի համար: Մնացած բոլորը կտեղծվեն հեղափոխութեան ստեղծագործութեամբ: Հուլիսյան դեպքերից հետո ավելորդ է խոսել յերկիշխանութեան մասին: Ամբողջ իշխանութիւնն անցել է կապիտալի ձեռքը: Կարելի չէ խորհուրդներում ձեռք բերել ինչպիսի մեծամասնութիւն կուզեք, բայց զբանով խորհուրդները իշխանութիւն չեն ստանա, քանի վոր ներկա իշխանութիւնը պե՛տ է սապալել, իսկ բանվորները, գյուղացիներն ու զինվորները պետք է հասկանան, վոր առանց իշխանութիւնը տապալելու իրանք վոչ հող և վոչ ազատութիւն չեն ստանա: Հերթական հարցն է—պայքար խորհուրդներին վերին շերտերի դեմ, պայքար բանվոր դասակարգի միացած չքավորագույն գյուղացիների հետ և հակահեղափոխութեան վերացում:

«Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» լողունգի վերացումը չի նշանակում «կորչեն խորհուրդները»: Բայլիկները խորհուրդներից դուրս չեն գա, բայց ներկայումս ուժը խորհուրդների մեջ չէ, այստեղ

հարցը մեծամասնութիւնը գրավելու մեջ չէ, այլ հակահեղափոխութիւնը մաքրելու, վերացնելու մեջ է:

Ընկ. Բուխարինի առաջադրած հեղափոխութեան յերկու հտապներին, ինչպես և այն կարծիքի աթիվ, թէ բուրժուա-իմպերիալիստը բլոկ է կազմել գյուղացու հետ*), ընկ. Ստալինն առարկեց, վոր, նախ և առաջ այդ բլոկը կազմված է գյուղացիութեան վերին շերտի հետ իհաշիվ նրա ստորին խավերի՝ յերկրորդը՝ հեղափոխութեան յերկու հտապներին ուսմունքը ճիշտ չէ: Գյուղացիական հեղափոխութիւնը չի կարող չզուգադիպել բանվորականի հետ, իսկ բանվոր դասակարգը, անպայման կպայքարի իր պահանջների համար: Հետեապես, անկարելի չէ զուտ գյուղացիական հեղափոխութիւն: Մյուս կողմից սոցիալիստական հեղափոխութիւնը Թուսաստանում Արևմտյան Յելրոդպաչի ոգնութեան դեպքում, առանց գյուղացիների, վորոնք արդեն հողը ստացել են, գործն այնպես է դնում, վոր ուսական պրոլետարիատը հեղափոխութեան յերկրորդ շրջանում հանդիսանում է հակառակորդ յերկրի ազգաբնակչութեան ահադին մեծամասնութեան:

Վերջապես բուրժուական հեղափոխութիւնից դեպի սոցիալիստականը թռիչք կատարելու մասին ընկ. Ստալինը մատնանշեց, վոր այն ընկերները, վորոնք համաձայն չեն թէ ուսական հեղափոխութիւնը սոցիալիստական է, չերեք ամսով ուշացել են, քանի վոր դեռ սպրիլյան կոնֆերենցիան է ասել դեպի սոցիալիզմը տանող մի շարք գործնական քայլերի անհետա-

*) Տես նույնպես նախկին գլխում նրա գեկուցումը ընթացիկ վորմնտի և պատերազմի մասին:

ձգելիութեան մասին: Ընկ. Պրեորրաժենսկուն, վոր կարծում եր թե Ռուսաստանը սոցիալիզմի ճանապարհին կարող ե կանգնել միայն Արևմուտքում պրոլետարական հեղափոխութեան գոյութեան պայմանով, ընկ. Ստալինը պատասխանեց, վոր անհնար չպետք ե թվա (կարող ե պատահել) վոր հենց Ռուսաստանը հանդիսանա սոցիալիզմի ճանապարհը հարթող չերկիրը, վորովհետև մեր հեղափոխութեան բազան ավելի լայն ե քան Արևմտեան Յեվրոպայում: Մեզ մոտ բանվորներին պաշտպանում են գյուղացիութեան չքավորագույն խավերը, մեր բուրժուազիան ավելի թույլ ե և վոր վերջապէս պետք ե դեն շարտել հնացած այն հասկացողութեանը, թե միայն Յեվրոպան կարող ե մեզ ճանապարհ ցույց տալ:

Անհրաժեշտ ե փակագծերի մեջ ասել, վոր այն ժամանակ, յերբ ընկ. Լենինը վերացրեց ամբողջ իշխանութունը խորհուրդներին լոգուենզը, այդ լոգուենզը սկսեց առաջադրել մենշևիկների ձախ թևը և ինքը Մարտովը: Ճիշտ ե, այս վերջինը այդ լոգուենզը հասկանում եր միայն վորպիս միացուցիչ միջոց՝ միացնելու «հեղափոխական դեմոկրատիայի բոլոր կենդանի ուժերը» ընդդէմ հակահեղափոխութեան և ժամանակավոր կառավարութեան:

Ինչ վերաբերում ե համագումարում արտահայտվողներին, չի կարելի չնկատել, վոր հին լոգուենզի պաշտպանները ճիշտ չեցին բնորոշում ուստական հեղափոխութեան բնուէթը, այդ պատճառով ել ճիշտ չեցին կարողանում վորոշել դասակարգային ուժերի փոխհարբերութեանը, վախենում եյին թե պրոլետարիատը կչեզոքանա, վախենում եյին պրոլետարիատի ժմերկի՝ դիկտատուրայի լոգուենզից և այլն:

Միևնույն ժամանակ չափազանց հաստատ եր այն համոզումը, թե գյուղացիութեանը հող ստանալուց հետո անպայման կգնա պրոլետարիատի և պրոլետարական հեղափոխութեան դէմ: Դեռ շատ անհավանական եր թվում, վոր բանվոր դասակարգը իշխանութեան տերը դառնալով, կարող կլինի սոցիալիստական հեղափոխութեան ընթացքում դեպի ինքը ձգել վոչ միայն գյուղի ստորին խավերը, այլ և միջակներին, այսինքն ազգաբնակչութեան ճնշող մեծամասնութեանը: Այն ինչ գյուղացիութեան մեծամասնութեան անխուսափելի հակահեղափոխական տրամադրութեանները մասին ունեցած համոզումը ստեղծում եր մի փակուղի, վորովհետև պրոլետարիատը այդ դեպքում, թեկուզ և միջազգային բանվոր դասակարգի կողմից պաշտպանութեան ունենալով, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխութեան միջոցին հանդիպում եր ազգաբնակչութեան մեծագույն մասի հակառակութեանը:

Այս բոլոր վիճարանութեաններից հետ, համագումարը այնուամենայնիվ իր 15-րդ նիստում բոլոր ձայներով, չորս հոգու ձեռնպահութեամբ, քաղաքական մոմենտի մասին ընդունեց մի բանաձև, վորը անկարելի եր համարում հեղափոխութեան խաղաղ դարգացումն ու իշխանութեանը խորհուրդներին խաղաղ ճանապարհով անցնելը և առաջադրում եր այն ժամանակի համար միակ ճշմարիտ լոգուենզը — «հակահեղափոխական բուրժուազիայի դիկտատուրայի լիակատար լիկվիդացիա»: Միմիայն հեղափոխական պրոլետարիատը, չքավոր գյուղացիութեան ոգնութեամբ, կարող ե իրագործել այս խնդիրը, վորը միևնույն ժամանակ հեղափոխութեան նոր վերելքի խնդիրն ե հանդիսանում»:

Բանաձևը նախազգուշացնելով պրոլետարիատին բուրժուազիայի պրովոկացիայից և վաղաժամ չկուլթնեբրից, կոչ եր անուժ նրան իր բոլոր ջանքերը գործադրել կազմակերպելու և նախապատրաստելու իր ուժերը այն սոմենտի համար յերբ ընդհանուր ազգային կրիզիսն ու մասսայական ուժերին վերկթը բարեհաջող պայմաններ կտեղծեն քաղաքի և գյուղի չքավորներին բանվորելի կողմն անցնելու, ընդդեմ բուրժուազիայի: Այն ժամանակ այս բոլոր հեղափոխական դասակարգերի նպատակը կլինի լարել բոլոր ուժերը պետական իշխանութունն իր ձեռքը վերցնելու համար:

VIII.

ՋԵԿՈՒՅՈՒՄՍ՝ ՅԵՎ ԲԸՆԱԶԵՎ ՏՆՏԵՍԵԼԸՆ ԳՐՈՒԹՅԸՆ ՄԸՍԻՆ

Ընկ. Միլյուտինի գեկուցումը ինչպես և 14-րդ խառում բոլոր ձայներով, յերկուսի ձեռնպահութեամբ ընդունած բանաձևը նախ և առաջ խոսում էր այն մասին, վոր յերկիրը գլորվում է դեպի տնտեսական վերջնական քայքայման և կորստի անդունդը*): Ճնտեսական լիակատար սնանկացումը արագանում է բուրժուա-

*) Ընկ. Միլյուտինը յերկրի տնտեսական դրութեան մասին բերեց հետևյալ թվերը, ամբողջ ազգային հարստութեան արժեքն է 70 միլիարդ, այնինչ յերկրի պարտքը 1918 թվին կհավասարվի 6) միլիարդի մետաղագործական արդյունաբերութունը կրճատվել է 40 տոկոսով: Մանվածագործականը՝ 20 տոկոսով, կանգ են առել 77 ձեռնարկութիւններ Գոնի ավազանում: Պետրոգրադում հացի պաշարը կքավականացնի միայն 11 օրվան, մյուս քաղաքներում 20 օրվան և այլն:

զիայի քաղաքականութեան շնորհիվ (սարտատ, արտադրութեան կանգնեցնելը), բուրժուազիայի ծառայութեան մտած ժամանակավոր կառավարութեան և խորհուրդների մեծամասնութեան մեջնստած ու բուրժուազիային ոգնող եսերներին ու մենչեիկներին քաղաքականութեան շնորհիվ: Կրիտիկական դրութունից դուրս գալու միակ միջոցը պատերազմի լիկվիդացիան է և արդյունաբերութեան կազմակերպումը՝ բանվորների և աղքատ գյուղացիների շահերին համապատասխան: Այս նշանակում է վոր պետական իշխանութունը պետք է անցնի պրոլետարիատի և կիսապրոլետարիատների ձեռքը:

Մի շարք հեղափոխական վճռական միջոցներ պետք է կիրառվեն: Այդ միջոցները հետևյալն են ա) արտադրութեան բաշխման պլանաչափ կանոնավորումը բ) բանկային գործի ազգայնացումն ու կենտրոնացումը, գ) մի շարք սինդիկատների մեջ մտնող ձեռնարկների ազգայնացում, դ) քաղաքի և գյուղի միջև ճիշտ փոխանակութեան կազմակերպում կոոպերատիվների և պարենավորման կոոպերատիվների միջոցով, չ) իրական բանվորական կոնտրոլի սանձանում և նրա հետագա զարգացումը արտադրութեան լիակատար կանոնավորման գործում, զ) առևտրական գողտիքների վերացում, առևտրական և բանկային գրքերի կոնտրոլի ազատութուն, պահեստների պարբերական հաշվառում և հրապարակում, որենսդրութեամբ արգելվում է դործարանների փակելը կամ արտադրութեան կրճատումը առանց հատուկ թուղթութեան, ը) անհպաղ զաղարեցնել թղթադրամի դուրս թողնելը, հրաժարվել պետական պարտքերը վճարելուց, պահպանելով մանր

պարտապաններէ շահերը, ամբողջ հարկային սխտեմի վերափոխումը, թ) բանվորական ուժի ճիշտ բաշխումն ժ) ընդհանուր պարտադիր աշխատանք:

Ընկ. Միլլուսինի ղեկուցման առթիւ մի շարք ընկերներ (Ոսինսկի, Սերգեև Սավելլե Զակս, Խարիտոնով, Անիսիմով, Գալլիս) ամենախիստ քննալ դատութեան յենթարկեցին բանվորական կոնտրոլի և ընդհանուր պարտադիր աշխատանքի պահանջները: Վոմանք (Ոսինսկի) գտնում ելին վոր բուրժուազիան հաղթահարելով ֆինանսական փլուզումը, բանվորական կոնտրոլն ու պարտադիր ընդհանուր աշխատանքը կուզղի բանվոր դասակարգի գեմ, ուրիշները պնդում ելին, վոր այժմ հերթի յն դրված վոչ թե բանվորական կոնտրոլի, այլ պետական իշխանութունը պրավելու հարցը, մլուսները յենթադրում ելին, վոր հակահեղափոխական շրջապատում չի կարելի մատնանշեմի ամբողջ շարք միջոցների վրա, վորոնք կարող են իրականանալ միայն հեղափոխութեան վերելքի ու նրա հաղթանակի դեպքում:

Զեկուցողը իր յեզրափակման խօսքի մեջ բոլորովին ճիշտ նկատեց, վոր պարտադիր աշխատանքը կամ արտադրութեան կոնտրոլը իր կողմից առաջադրվում ե միայն իշխանութունը պրոլետարիատին և չքավոր գլուղացիութեանը անցնելու պայմանով: Բոլոր առաջարկած միջոցները նկատի են առնվում յերկարատե անցողական ժամանակաշրջանի համար, վորովհետեւ պրոլետարիատի դիկտատուրան անմիջապես սոցիալիզմը չի իրականացնելու, այլ յերկարատե մի շրջան ե: Այժմ մենք չպետք ե ընդհանուր դեկլարացիաներ գրենք, այլ պետք ե առաջարկենք մի ամբողջ

շարք վորոշ ձեռնարկումներ, վորպեսզի մեր անտեսական ծրագրերը հանդիսանա գորպես տարան. բուրժուազիայի կողմից կրեղիսը ձգձգելու դեմ:

IX

ԲՆԵՆՁԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԻՐ ԺՈՂՈՎԻ ՆԵՐՔՆՏՐԵԱՆ ԿԼՄՊԸՆԻՆՏԻ ՄԵՍԻՆ

Համառուական ապրիլյան կոնֆերենցիայի բանածը խոսում եր ուսական հեղափոխութեան յերկրորդ հոտազի մասին, վորպես ամբողջ իշխանութունը խորհուրդների կամ ազգաբնակչութեան մեծագույն մասի կամքը արտահայտող ուրիշ որգանների (տեղական կնքնավարութեան որգաններ, հիմնադիր ժողով և այլն) ձեռքը անցնելու շրջանի մասին:

Սակայն այս բոլորովին չեր նշանակում, թե բալշեիկները հավասարութեան նշան ելին գնում խորհուրդների և հիմնադիր ժողովի մեջ: Այս վերջինը տարբերվում եր խորհուրդներից նրանով, վոր ընտրվելու եր վոչ թե միայն աշխատավորների կողմից, այլ բոլոր քաղաքացիների կողմից, այսինքն և՛ կապիտալիստների և՛ կալվածատերերի կողմից:

Ապրիլին պետական իշխանութունը գեռ բուրժուազիայի ձեռքում չեր: Բուրժուազիայի սիրապիսուրյան միջոցին, յերբ նրա ձեռքումն են ճնշելու և մասաներին հիմարացնելու բոլոր միջոցները, հուսալ թե հնարավոր ե գումարել վորեւ հիմնադիր կամ որենսպրական ժողով, վորը արտացոլեր ժողովրդի իսկական մեծամասնութեան կամքը— «գա խելացնորութուն ե կամ բանվորներին խաբելու հասարակ միջոց»: 1917

Թվի ապրիլին գործն ալ կերպ եր, ժողովրդի իսկական մեծամասնութեան կասքն արտահայտող հիմնադիր ժողով հրավիրելու հնարավորութիւնը վերացած չեր: Բայց և այս դեպքում ևս բայլշեիկները հիմնադիր ժողովում և նրանից դուրս կպսիքարելին «դեմոկրատական պրոլետարատ-գլուղացիական հանրապետութիւն» ստեղծելու համար, ուրիշ խոսքով «Փարիզի կոմունայի տիպի պետութեան», «խորհրդային տիպի պետութեան» համար:

Հուլիսյան որերից հետո դրութիւնը չերկրում արմատապես փոխվեց, պետական իշխանութիւնն անցավ բուրժուազիայի ձեռքը, բայլշեիկները դրեցին աչք ի խանութիւնը տապալելու նպատակով ապրտամբութիւնն նախապատրաստելու հարցը:

Ճիշտ վարվեցին արդի՞ք այն ժամանակ բայլշեիկները, չերը միաժամանակ VI համագումարում ընդունեցին 15 պետից բաղկացած բանաձև հրահանգ այն մասին. թե կուսակցութիւնն ինչպես պետք է մասնակցի հիմնադիր ժողովի ընտրութիւններին: Անշուշտ ճիշտ վարվեցին:

«Ընդհանուր ընտրական իրավունքը ցուցց ե տալիս, թե ինչպես են տրամադիր վճռելու իրենց խնդիրները զանազան դասակարգերը», — այսպես եր գրում VI համագումարի համարչա չերկու և կես տարի հետո ընկ. Լենինը, բայց և իսկույն ավելացնում եր «Իսկ այդ խնդիրները վճռվում են վոչ թե ձա նատվութեամբ, այլ դասակարգային կովի բոլոր ձեերով, ներառյալ նաև քաղաքական կովը»: Այնուհետև գրում եր «բուրժուական պարլամենտին մասնակցելը հեղափոխական պրոլետարիատի կուսակցութեան համար

անհրաժեշտ է մասսաներին լուսավորելու նպատակով, վերալիսին ձեռք ե բերում ընտրութիւններին և կուսակցութեան՝ պարլամենտի ներսում պայքարելու միջոցով»: Սակայն «Դասակարգերի կովը սահմանափակել միմիայն պարլամենտի ներսի կովով կամ այս վերջինը համարել ամենաբարձր, վճռական նշանակութիւն ունեցող, պայքարի մյուս ձեերը իրեն չենթարկող մի ձև — նշանակում է փաստորեն անցնել բուրժուազիայի կողմը»:

Բայլշեիկները VI համագումարում մտադրվում եյին մասնակցել հիմնադիր ժողովի ընտրութիւններին հատկապես նրա համար, վոր հաշվառքի չենթարկելն, թե ինչպես են մտադիր վճռել իրենց խնդիրները զանազան դասակարգերը, նրա համար, վոր պետքի թե նախընտրական պայքարում և թե հիմնադիր ժողովի՝ իրա ներսում պայքարի միջոցով լուսավորեն մասսաներին: Իրենց հիմնական բանաձեերում բայլշեիկները VI համագումարում պարզ ցուց տվին, վոր խնդրի լուծումը, այսինքն հակահեղափոխական դիկտատուրայի տապալումը ձեռք կբերվի վոչ թե «ձայնատվութեան միջոցով, այլ դասակարգային կովի բոլոր ձեերով, ներառյալ և քաղաքացիական կովը»:

VI համագումարի ընտրութիւններին մասին ընդունած բանաձե հրահանգը կազմված եր այնպես, վոր ն պատակ եր դում մասսաների լուսավորութիւնն ու կազմակերպումը, Ռ. Ս. Գ. Կ. (բայլշեիկներին) ծրագրի ավելի լիակատար պարզաբանումը, կուսակցութեան կենտկովի առավելագույն ղեկավարութիւնը ընտրական ամբողջ կամպանիայում:

Գրավոր և բանավոր ագիտացիայի կազմակեր-

պումբը, տեղերում ազիտատորները կարճատև կուրսերի հիմնումը, գիտակից բանվորների և զինվորների գլուղ ուղարկելը, խոշոր արդյունաբերական կենտրոններում բանվորներից և զինվորներից հայրենակցական միություններ կազմակերպել — այս բոլորը վերաբերում է յին մասսաների լուսավորութան և մոբիլիզացիային:

Բլոկներ կազմելու թուլլուսութունը միմիայն իրականում ետերների և մենշևիկների հետ իրենց կապերը կտրած կուսակցությունների հետ և համաձայնություններ կայացնելը անկուսակցական հեղափոխական կազմակերպությունների հետ (հողային կոմիտեներ և այլ), չեթե նրանք լիովին ընդունում են բազմակիցան ծրագրերը, — ապահովում եր կուսակցութան ամբողջ ծրագրի և նրա բոլոր լոզունգների պարզաբանումը առանց վոևե կրճատման:

Վորքան հիմնագիր ժողովի թիկնածուների ցուցակները չենթակա էյին կենտկոմի կոնտրոլին և վորքան կենտկոմը կազմակերպելու յեր կենտրոնական ընտրական հանձնաժողով — այնքան ապահոված եր ամբողջ ընտրական կամպանիայի լիակատար կենտրոնացած զեկավարությունը:

X

ԲԱՆԱՃԱԿԵՐ ՊՐՈՓԵՍՍՈՆԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս առթիվ առաջարկված յերկու բանաձևերը (մեկը ներկայացրել եր զեկուցող ընկ. Գլեբովը, մյուսը, համագումարի պրոֆեսսորնալ սեկցիայի կողմից ընկ. Սկրիպնիկը) քննութան չառնվեցին համագումարի կողմից, այլ ընդունվեցին վորպես նյութ և հանձնե-

վեցին կենտկոմին: Ինչպես յերկու բանաձևերի, նույնպես և ընկ. Գլեբովի զեկուցման հիմնական գրությունները հետեյայններն էյին. ա) պրոֆմիությունները պետք է լինեն պրոլետարիատի դասակարգային, մարտական կազմակերպությունները. բ) Պրոֆմիությունները իրենց առորյա, տնտեսական պրոթյան բարելավման համար մղած պայքարը պետք է կապեն ներկայիս գասակարգային հսկայական բաղխումների հետ. գ) Գտնվելով պրոլետարիատի քաղաքական կուսակցության հետ սերտ կոնտակտի մեջ, պրոֆմիությունները պետք է սերտ հարաբերությունների մեջ մտնեն վերջին ժամանակները Արևմտյան Ֆեվոպայում կազմակերպվող հեղափոխական պրոֆմիությունների հետ և նրանց հետ մշակեն միջազգային սպանդանոցի դեմ և սոցիալիզմի համար մղվող կովի մի ընդհանուր ծրագիր. դ) Հիշելով, վոր պատմության առաջադրած խնդիրները Ռուսական պրոլետարիատը կարող է լուծել միայն միջազգային մասշտաբով, իրեն Ռուսաստանի մեջ միությունները պետք է կազմակերպեն տնտեսական և քաղաքական դիմադրություն հակահեղափոխության դեմ և պայքարեն գլուղացիութան չքավորագույն խավերի վրա հենվող պրոլետարիատի զեկտատուրայի համար:

Ընկ. Սկրիպնիկի բանաձևը ավելի յեր ճշտում այսպես կոչված պրոֆմիությունների կուսակցությունից «չեզոք» կամ «անկախ» լինելու հարցը: Ինչպես հայտնի յե, չեզոքությունը միշտ պաշտպանում էյին ռուսական մենշևիկները և բուրժուազիային սպասավորող արևմտա-չեվրոպական ուպորտունիստ-սոցիալ դեմոկրատները: Բանաձևը ցույց եր տալիս, վոր այդ

«անկախութիւնը» Արեւմուտքում լուրջ պատրվակ էր, վորպեսզի համաշխարհային պատերազմի ընթացքում միութիւնները առաջինը անցնէին բուրժուազիայի կողմը: Վորքանով «կուսակցութիւններն ու միութիւնները» «միարան պիտի լինեն», բանաձևն առաջարկում էր պրոֆմիութիւններին և կուսակցութեան փոխադարձ ներկայացուցչութիւն, միութիւններին մեջ ստեղծել ֆրակցիաներ, վորոնք պետք է գործելին կուսակցական կազմակերպութեան հետ սերտ կապ պահպանելով:

XI.

ԿՈՍՏԱՅՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեղափոխութեան հենց առաջին որերից մի շարք քաղաքներում և առանձնապես Պետրոգրադում սկսվեց բանվորական յերիտասարդութեան լայն շարժում՝ ինքնուրույն կազմակերպութիւններ ստեղծելու նպատակով: Ռուսական բուրժուազիան անմիջապես փորձերի դիմեց ոգտագործելու այդ շարժումը իր ոգտին, իր ազդեցութիւնն ու «հարեւնասիրութիւն» սկզբունքն սմրացնելու նպատակով*):

Այդ պատճառով զեկուցող Սարիտոնովի առաջարկած բանաձևը սկսվում էր նրանից, վոր կուսակ-

*) Այսպես, որինակ Պ, Շելցովի կազմակերպած «Աշխատանք և Լույս» ընկերութիւնը Պետրոգրադում: Այս խմբակի կողմից կազմակերպված Մայիս-մեկյան ցույցը, վորին մասնակցում էին 10.000 հոգի, վոչ մի քաղաքական գումարում չուներ: «Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք» լոզունգով մեկ յերկու հատ դրոշակ կար միայն:

ցական կազմակերպութիւնները տեղերում պետք է ամենալուրջ ուշադրութիւն դարձնեն յերիտասարդութիւնը կազմակերպելու գործի վրա: Բանաձևը մատնանշում էր, վոր ա) կուսակցութեան միջամտութիւնը բանվոր յերիտասարդութեան կազմակերպչական շինարարութեան հարցերում չպետք է կրի խնամակալութեան, ոպեկացի բնույթ. բ) կուսակցութիւնը պետք է ձգտի, վոր յերիտասարդութիւնը ստեղծի ինքնուրույն կազմակերպութիւններ, վորոնք կազմակերպչորեն յենթակա չեն, այլ միայն հոգեպես կապված են կուսակցութեան հետ: գ) Յերիտասարդական կազմակերպութիւնները իրենց ծագման հենց սկզբից պետք է կրեն սոցիալիստական բնույթ:

Յերիտասարդական կազմակերպութիւնների յինթասեկցիացում տարաձայնութիւններ ծագեցին կուսակցութեան և յերիտասարդական միութիւնների փոխհարաբերութիւնների հարցի առիթով փոքրամասնութիւնը (40-ից 5 ք) պնդում էր, թե միութիւնները պետք է յենթարկվեն կուսակցութեանը: Վերջապես յերրորդ հոսանքի կարծիքով չպետք է միութիւնները հենց սկզբից իրենց հայտարարեն սոցիալիստական միութիւններ:

Պետք է ասել, վոր մենչեիկներն էլ այն ժամանակ պնդում էին, թե յերիտասարդական միութիւնները պետք է կազմակերպվեն կուսակցական կազմակերպութիւններին կից: Միութեան ակտիվը, վորի ներկայացուցիչներ ընկ. Վ. Ալեկսեևը, խնդրում էր համագումարին միանալ ընկ. Սարիտոնովի առաջարկած բանաձևին: Այդ բանաձևը այն ժամանակ յերբ նոր նոր էլին ծագում յերիտ միութիւնները, ամենաճիշտ

եր, քանի վոր նա մի կողմից տալիս եր վորոշ ազատութիւնն և ապահովում եր միութիւններին լայն մասսայական կազմ, մյուս կողմից խոսում եր սոցիալիստական յերիտմիութիւններին մասին և դրանով մի անգամից ուղղում եր յերիտմիութիւնները այնպիսի գծով, վորն ապահովում եր կուսակցութեան ղեկարարութիւնը:

XII

ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՓՈՒՄԸՆ ՀԱՐՅՈՒ ՅԵՎ ԱԳԻՏԱՑԻՈՆ ՀԱՐՅԵՐ

Կուսակցական ծրագիրը վերանայելու համար համագումարն ընտրեց առանձին սեկցիա: Վորովհետև համագումարի աշխատանքներն ընթանում էլին անբարեհաջող պայմաններում, մյուս կողմից ժամանակ չկար այդ հարցը բավականաչափ քննելու, այդ պատճառով սեկցիան հնարավոր չհամարեց ծրագրի նոր տեքստ մշակել: Համագումարը սեկցիայի առաջարկութեամբ անհրաժեշտ գտավ կուսակցութեան նոր ծրագիր մշակելու, Կենտրոնական Կոմիտե կազմակերպելու և կուսակցական ծրագրալին հարցերը քննութեան յենթարկելու նպատակով հրավիրել հատուկ համագումար: Իսկ կուսակցական ընթացիկ գործնական աշխատանքների համար Կենտկոմին հանձնարարվեց մշակել առանձին պլատֆորմ՝ հիմնված VI համագումարի վորոշումների, ինչպես և ապրիլյան կոնֆերենցիայի իրենց ուժը չկորցրած վորոշումների վրա:

Համագումարի 12-րդ նիստում ընդունվեց Ռուսաստանի Սոց. Դեմոկրատական Բանվորական Կուսակցութեան (ք) Կանոնադրութիւնը, հիմնված գեմոկրատական կենտրոնացման սկզբունքների վրա:

13-րդ նիստում համագումարը լսեց ընկ. Սամոյ-

լովայի զեկուցումը պրոպագանդի և ագիտացիայի հարցերի մասին: Ընդունված բանաձևի մեջ ընդգրկվում է ինտելլիգենցիայի հեռացումը պրոլետարական կուսակցութեան շարքերից, մասնանշվում է, վոր անհրաժեշտ է պատրաստել ակտիվ աշխատակիցներ պրոլետարական ինտելլիգենցիայի շարքերից, անհրաժեշտ է խորացնել կուսակցութեան մեջ միացած և նրան համակրող մասսաների ինքնազիտակցութիւնը: Այս նպատակով անհրաժեշտ է մշտական աշխատանք տանել կուսակցութեան ծրագիրը ընդհանրացնելու գրույցներին, դասընթացքների և դասախոսութիւններին միջոցով, առանձին ուշադրութիւն դարձնել ակումբների վրա, հիմնել կուսակցական դպրոցներ բանվորների համար և հրատարակել հանրամատչելի գիտական հանդեսներ: Ընկ. Պրեոբրաժենսկու առաջարկութեամբ համագումարը վորոշում ընդունեց հիմնել դասընթացներ սոցիալիստական յերիտասարդական միութիւններին կազմակերպման և ղեկավարման համար ինստրուկտորներ պատրաստելու նպատակով:

XIII

ԲՆԵՂԵՎ ԿՈՒՍԵԿՑԻՈՒԹՅԱՆ ՄԻՆՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Մենշևիկ-ինտերնացիոնալիստների ձախակողմյան թևի անունից համագումարի 5-րդ նիստում վողջունի խոսք ասեց ընկ. Լարինը: 13-րդ նիստում կարդացմենշևիկ-ինտերնացիոնալիստների կենտրոնական բջուրով նամակը՝ ուղղված համագումարին և ստորագրված Մարտովի և Ասարովի կողմից: Այս նամակի մասին ընկ. Յուրենովը, վորը զեկուցում եր կուսակ-

ցության միացման հարցի մասին, շատ արդարացի կերպով նկատեց, վոր Մարտովը նամակի սկզբում «գլուխ ե տալիս համագումարին, խոսում ե միացման անհրաժեշտութեան մասին, բայց հետագայում համարյա սպառնում ե թե միացումը անհնարին ե, յեթե մենք չընդունենք մենշխիկների համար վոչ ցանկալի բանաձևեր»։ Մինչև այժմ մենշխիկ-ինտերնացիոնալիստները չեն բաժանվում պաշտպանողականներից։ Այս բոլորը միասին վերցրած ցույց ե տալիս, վոր ստիպված պիտի լինենք միանալ «Մենշխիկների փոքրամասնութեան փոքր մասի հետ»։

Համագումարը իր բանաձևում ընդգծեց, վոր բոլոր փորձերը՝ ստեղծելու միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցութունն առանց մենշխիկ-ինտերնացիոնալիստների լիովին և անդարձ անջատման մենշխիկ-պաշտպանողական-իմպերիալիստներից, ծանր հարվածներ կլինեն պրոլետարիատի շահերին։ Համագումարը հանուն միութեան լրգունգի կոչում ե բոլոր հեղափոխական ինտերնացիոնալիստներին, վորոնք իսկապես խզել են իրենց կապերը մենշխիկ իմպերիալիստների հետ, անմիջապես կտրեն իրենց կազմակերպչական կապերը պաշտպանողականների հետ և միանան Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան (բ) շուրջը։

XIV

ՎԵՑԵՐՈՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆՁՆՆԵՐԻԹՅՈՒՆԸ

Չնայած բոլոր այն ծանր պայմաններին, վորոնց մեջ աշխատում եր համագումարը, նա այնուամենայնիվ քննեց համարյա բոլոր հարցերը։ Ինտերնացիո-

նալին վերաբերող հարցը որակարգից հանվեց, բայց ապրիլյան կոնֆերենցիայի այդ մասին ընդունած բանաձևը դեռևս հնացած չեր*):

Մի շարք կուսակցական ղեկավարների և առաջին հերթին ընկ. Լենինի բացակայութեամբ, համագումարն ընդունեց մի շարք ճիշտ վորոշումներ կուսակցութեան տակտիկական կարևորագույն հարցերի վերաբերյալ։ Իհարկե պատմութեան հանկարծակի շրջադարձի լրգունգի փոփոխութեան նախաձեռնութունն ու արժանիքը պատկանում ե ընկ. Լենինին վորը խուսափելով ժամանակավոր կառավարութեան հալածանքներից, թագստից ղեկավարում եր կուսակցութունը։ Սակայն համագումարի կազմակերպումը, լենինյան ճիշտ գիծ անցկացնելը, կուսակցութեան համախումբումը այդ գծի շուրջը--այս բոլորը այն կենտրոնական կոմիտեյի և ընկերների այն խմակի գործն է, վորը գործնականորեն ղեկավարում եր աշխատանքը հետհուլիսյան ծանր օրերին։

Ուշադրութեան արժանի չեն նաև յերկու հանգամանք, համագումարի կազմը և ընդունվող վորոշումների միաբանութունը։ Համագումարի 250 ան-

*) Այդ բանաձևը վերաբերում եր դանիացի սոցիալիստ Բորգերգի կողմից մտցրած առաջարկութեանը Շվեդիայի, Դանիայի և Նորվեգիայի կուսակցութունների անունից նա առաջարկում եր խաղաղութեան պաշտպանութեան նպատակով Ստոկհոլմում հրավիրել սոցիալիստների համագումար։ Կոնֆերենցիան հայտարարեց, վոր միանգամայն անթույլատրելի չե համարում գանազան իմպերիալիստական կառավարութունների անուղղակի գործակալների նմանորինակ խորհրդակցութուններին մասնակցելը, իսկ իրեն՝ Բորգերգին համարում ե գերմանական իմպերիալիստական բուրժուազիայի գործակալ։

դասներէց*) միայն չորս հոգի էյին, վոր կուսակցութեան մեջ մտել էին հեղափոխութեան միջոցին, տասը հոգի պատերազմի ժամանակ: Բոլոր ֆնացածները կուսակցութեան անդամ էյին մինչ պատերազմը: Ընդհանուր թվի մտա մեկ քառորդ մասը իրենց աշխատանքը կուսակցութեան մեջ սկսել էյին 1905 թվից, միջին բալլընիկական ստաժը հավասար էր ութ տարի յերեք ամսվան: Համագումարի միաբանութիւնը (համերաշխութիւնը) համեմատած ապրիլյան կոնֆերենցիայի հետ, միանգամից աչքի չե զարնում: Ապրիլյան կոնֆերենցիային ընթացիկ մոմենտի մասին բանածնը ընդունվեցավ 71 ձայնով ընդդեմ 39-ի, ութ հոգու ձեռնապահութամբ:

VI համագումարում վոչ մի նման բան չենք տեսնում:

Այն ժամանակ, յերբ բուրժուազիան և սոցիալիստները թաղում էյին**) բալլընիկները կուսակցութիւնը, այդ կուսակցութիւնը ցույց տվեց ամբողջ յերկրին իր ույժը, ազդեցութիւնն***) ու միաբանու-

*) Ներկա էյին 264 հոգի, վորոնցից 157 վճռական ձայնով, իսկ 107-ը խորհրդակցական:

**) Իրերի դրութիւնն այնպես էր, վոր համագումարն ընտրելով նոր կենտրոնական կոմիտե, վորոշեց չհայտարարել նրա անդամների անունները: Կենտկոմի կազմը—Լենին, Կամենև Տրոցկի, Սվերդլով, Զինովյեվ, Ստալին, Նոգին, Ռիկով, Բուխարին, Ուրիցկի, Միլուտին, Լոմով, Կուլանտայ, Աբաեմ, Կրեստինսկի Զերժինսկի, Իոֆֆե, Ստասովա, Սոկոլնիկով, Սմիլգա, Բուբնով:

***) Համագումարն իր աշխատանքների ընթացքում ստանում էր վողջույններ Ռուսաստանի բոլոր ծայրերից, ինչպես կազմակերպութիւններից, նույնպես և անմիջապէս գործարաններից:

թիւնը և միենույն ժամանակ լիակատար վճռականութեամբ ու պարզորոշ կոչ արեց բանվոր մասսաներին կազմակերպելու՝ ապստամբութիւնը հախապատրաստելու համար, և այդ ապստամբութեան միջոցով հենվելով դյուրացիութեան չքավորագույն խավերի վրա, տապալելու հակահեղափոխական դիկտատուրան ու նրա անզը հաստատելու պրոլետարիատի գիկտատուրան:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ *)

Բոլոր աշխատավորներին, Ռուսաստանի բոլոր բանվորներին, զինվորներին յեւ զյուզացիներին.

Ընկերներ !

Հինգ ամիս է անցիլ այն որից, յերբ հեղափոխական պրոլետարիատն ու զորքերը տապալիցին դազանակի ու մտրակի իշխանությունն ու բանտարկեցին Նիկոլայ Ռոմանովին :

Բանվորը թոթափեց իրենից շղթաները, վորով շղթայված էր վոստրիկանական իրավակարգի կողմից : Զինվորը դարձավ ազատ քաղաքացի : Համաշխարհային բարբարոսության և գազանացման պայծառներում հաղթականորեն հնչեց Ռուսաստանի հեղափոխության հուժկու ձայնը — «Ժողովրդների խաղաղություն և յեղբայրություն» :

Հեղափոխական մարտիկների առաջին շարքերում ընթանում էր պրոլետարիատը : Հենց սկզբից Ռուսաստանի պրոլետարիատը հասկանում էր, վոր Ռուսական հեղափոխության հաջողության, խաղաղության և ազա-

*) Մշակված կենտրոնական կոմիտեյի կողմից՝ համազուգարի հանձնարարութեամբ և համազուգարի անունից :

տության համար անհրաժեշտ է բոլոր յերկրների բանվորների փոխադարձ ոգնությունը, անհրաժեշտ է Յեվրոպայի արյունաքամ ու ճնշված պրոլետարների միջազգային ապստամբությունը : Նրա մարտական կոչը դարձավ «Կեցցե միջազգային հեղափոխությունը» :

Միջազգային կապիտալը այդ կոչին պատասխանեց դավադրանքով ընդգեմ Ռուսական հեղափոխության : Ռուսական հեղափոխությունը նշանակում էր իմպերիալիստական Ֆրոնտի ձեղքում : Ռուսական հեղափոխությունը սպառնում էր վառել համաշխարհային ապստամբության հրդեհը, տատանել ու փշրել կապիտալի իշխանությունը, հողին հավասարեցնել վոսկե հորթին : Միջազգային բիրժաների գայլերի ու բանկերի տերերի առաջ իր ամբողջ հասակով մեկ ծառայով մի խնդիր — ինչ գնով էլ վոր լինի խեղդել Ռուսական հեղափոխությունը, քայքայել նրա ուժերը, գլխատել միջազգային պրոլետարիատին, վոչնչացնել նրա կուսակցությունը :

Ռուսական հալիոսակիչները նրանց հետ սերտորեն միաբանեցին, կապվելով գաղտնի կապերով : Հեղափոխության հենց առաջին իսկ որբերից Ռուսական Ֆրոնտան սական բուրժուազիան ու նրա կուսակցությունը այսպես կոչված «Ժողովրդական Ազատության կուսակցությունը» — պայծառափորվեցին արեմբտա յեվրոպական իմպերիալիզմի զիշատիչների հետ : Ռուսական բուրժուազիան չեր առարկում ցարի միահեծանության տապալան դեմ, քանի վոր նրա տիրապետությունը անկարելի չեր դարձնում նույնիսկ պատերազմի շարունակիլը (դրան խանգարում էլին ցարտկան մինիստրների գողություններն)

վերը, նա քննադատում էր եսերական-մենչեկական տակախկալի վախկոտությունը, անվճռականությունն ու անոգնական լինելը: Նա ամենայն համառությամբ պահանջում էր իշխանությունը հանձնել դեմոկրատիայի ձեռքը, պահանջում էր խզել բոլոր յերկրների կապիտալիստներին հետ, հրապարակել բոլոր գաղտնի պայմանագրերը, վորոնք գաղտնի ելին պահում ժողովրդից: Նա պահանջում էր հողն անսիջապես հանձնել գյուղացիներին, բանվորական վերահսկողություն հաստատել արտադրության վրա, պահանջում էր իրենց՝ ժողովուրդների կողմից հաստատված ընդհանուր խաղաղության դաշինք: «Հաց, խաղաղություն, ազատություն» — գրված էր նրա կարմիր դրոշակի վրա:

Յեռամյա պատերազմի ճիրաններում գալարվող չերկրում աճում էր տնտեսական ու Ֆինանսական չտեսնված կրիզիսը: Պատերազմի ծանր մուրճը մանրացնում ու փոշի չեր դարձնում ժողովրդական աշխատանքի կուտակման վերջին մնացորդները: Յերկիրը որեցոր նմանվում էր անդամալույծի: Արտադրական ուժերի քայքայումն ու նրանց բարբարոսական թալանը փուլումի վերջին ստիճանին ելին հասցրել չերկիրը: Պատերազմը վորպես մի վիթխարի վամպիր ծծում էր յերկրի բոլոր հյութերը: Չկա վառելիք, չկա հում նյութ, չկա հաց: Սովի ուրվականը սկսել է շրջել քաղաքներում, չք վորության բնակարաններում: Յերկրի առաջ բացվել է կործանման անհատակ անդունդը:

Կապիտալը ժողովրդին գիտակցաբար հրում է դեպի այդ անունդը:

Խոշոր բուրժուազիան կրճատելով ձեռնարկու-

թյունները և կազմալուծելով արտադրությունը, ավելի յի խորացնում ճգնաժամը և ուժեղացնում անարխիան: Արտադրելով հայրենասիրության և հայրենիքի մասին, անարգելով հեղափոխական բանվորներին, միացյալ սինդիկատները, իրենց գաղտնի ժողովներում մշակած հատուկ ծրագրի համաձայն, համառ կերպով սիստեմատիկաբար դանդաղեցնում ելին արտադրության ընթացքը, վորպեսզի շփոթ և քառս ստեղծելով, ամբողջ մեղքը բարդեն բանվորների վրա և այդպիսով ամբողջ իշխանությունը կենտրոնացնեց իրենց ճարպիկ թաթերում: Ժողովրդական տնտեսության ավերակներին վրա, անհաշիվ մանր քայքայված գործատերերի վոսկորների գնով, խոշոր կապիտալի մարդակերները ազանաբար առասպելական ոգուաներ ստանալով և աղքատացող մտասնների քաղցը շահագործելով, իրենց ստոր քաղաքականությունն ելին վարում ընդդեմ՝ բանվոր դասակարգի: Ժողովրդի ստորին խավերում աճում էր խուլ դժգոհությունն ու վրդովմունքը ընդդեմ կապիտալի ու սրա մինիստրներին: Ավելի ու ավելի չեր լսելի դառնում աշխատանքի միլլիոնավոր բանակի տրտունջը:

Նրանց պատասխանեցին հարձակման քաղաքականությունը: Դաշնակից պետությունների միացյալ կապիտալը իր ուժերն էր ժողովել ուսական հեղափոխության վրա գրոհ տալու նպատակով: Անզլիական և ամիրիկական կապիտալիստները, վորոնք վորպես վարկատուներ, ուսական կյանքի տեր ու տնորենն ելին դարձել, միանալով Ռուսաստանի իրենց հավատարիմ ծառաներին հետ, վճռեցին կովի ողորկել պատերազմելու համար անպատրաստ բանակը: Նրանց

համար կարևոր չե՞ր ճակատամարտի վախճանը: Նրանց համար կարևոր եր խախտել զինադադարը, վերանորոգել ուղղմական գործողութիւնները, ուժեղացնել հրամանատարների իշխանութիւնը: Նրանք նպատակ ունեւին տանջված բանակը նորից պատերազմի քշել վորպեսզի թնդանութիւնների վորոտի տակ հաջողվի խեղդել դասակարգային կռիւի և հեղափոխութեան վորոտը:

Եսերներն ու մենշեիկները հավանութիւն տալով հարձակման աակտիկային, դրանով իսկ մասնեցին իրենց ելութիւնը և դավաճանեցին հեղափոխութեանը: Մշտապես համաձայնվելով իմպերիալիստների հետ, գուրկ վորեւ վճռականութիւնից, նրանք իրենց գերի դարձրին գիշատիչներին: Իրենց սեփական ձեռքերով նրանք իշխանութիւնը հանձնեցին զինվորական հակահեղափոխական քլիքին: Յեվ բանկերի ու բիրժայի ցնձացող տուգերն ալժամ ստորաբար կռվի են կանչում դեմոկրատիային, բացարձակ հայտարարելով, վոր իրենք ցանկանում են պատերազմել «մինչև վերջ», այսինքն անվերջ, քանի վոր վոսկու ծանրութիւնից դեռ չեն պայթել ամիրիկական Մորգանների հկուղները, սինչև վոր արջան ցողը դեռ բոլորովին չի ծածկել հոշոտված յերկրի բոլոր դաշտերը:

Բուրժուազիան ժամանակավորապես հասավ իր նպատակին: Ուր մնացին բոլոր ժողովուրդների յեղբայրութեան հպարտ կոչերը: Ուր մնացին համաշխարհային հեղափոխութեան ծածանվող դրոշակները: Այդ կոչերը եսերներն ու մենշեիկները փոխեցին սպանդանոցի շարունակութեան կոչերով: Այդ դրոշակները

անարգեցին ու սեացրին բուրժուազիայի ծառաները, հանձնելով այն հարձակողական քաղաքականութեան հերոսներին անարգելու ու ցեխի հետ հավասարեցնելու նպատակով:

Այսպիսի քաղաքականութեանն ի պատասխան աճում եր պրոլետարիատի և սոաջավոր զինվորների վրդովմունքն ու զայրույթը: Յեվ այդ զայրույթի բուռն տարերային պայթիւնը փողոց դուրս բերեց բանվորներին և զինվորներին. չե՞ր կազեա մինխտորները գողտի տեղեկութիւն ստանալով հարձակման անհազող չեղքի մասին, շտապեցին հեռանալ իրենց պոստից և ամբողջ պատասխանատվութիւնը ձգել իրենց «սոցիալիստ» ծառաների վրա: Հուլիսի 3-4 իրենք մեղանական «սոցիալիզմի» ղեկավարները, խորհուրդների մեծամասնութեանն սոաջադրեցին պատմական մի խոշորագույն հարց. — ի՞նչ են նրանք, պրոլետարիատի հետ, ընդեմ հակահեղափոխութեան, թե՞ հակահեղափոխութեան, ընդդեմ պրոլետարիատի: Այդ որերին հարկավոր եր ընտրութիւն անել պարզ ու վորոշ: Ու նրանք մինխտորական այդ սոցիալիստները ընտրեցին: Իրենց դրոշակների վրա «ամբողջ եշխանութիւնը խորհուրդներին» լողունգով փողոց դուրս յեկած բանվորներին ու զինվորներին խաղաղացնելու համար խորհուրդների ղեկավարները գորքեր դուրս բերին: Նրանք իրենց համաձայնողական քաղաքականութեան շնորհիվ պաշտպանեցին հակահեղափոխութիւնը և հրացանի փողերն ուղղեցին բանվորական բատալիոնները դեմ, հեղափոխական ուժերի այս առաջագնդի, պրոլետարիատի կուսակցութեան դեմ: Միայն մեր կուսակցութիւնը մնաց իր դիրքերում: Միակ նա

աղատութեան համար մահաբեր այդ ծանր ժամին չլքեց բանվորական բաշտները: Միակ նա եր ձգտում այդ չեղուցիին տալ խաղաղ և կազմակերպված բնույթ, մշտապես մնալով մասսաների հետ, չլքելով նրանց: Այդ նրա հեղափոխական պարտքն եր, այդ եր պահանջում նրա հեղափոխական պատիվը:

Մենչեկիններն ու եսերները, կատարելով բուրժուազիայի կամքը, զինաթափ արին հեղափոխութեանը ու գրանով իսկ զինեցին հակահեղափոխութեանը: Բուրժուազիան նրանց թողեց զբաղվելու խաղաղացնելու և ջախջախելու կեղտոտ գործով: Նրանց լռելյան համաձայնութեամբ շղթայաղերծ ելին արված բուրժուական գծուծ ամբաստանութեանների կատաղած շները ընդդեմ մեր կուսակցութեան փայլուն ղեկավարների: Այդ նրանք եյին, վոր զբաղված եյին պրոլետարական ղեկավարների զլուխների անարգ ու խայսատակ վաճառքով, մեկը մյուսի չետեից նրանց հանձնելով կատաղած բուրժուանների ձեռքը: Այդ նրանք են, վոր Ռուսաստանի մայրաքաղաքը, ամբողջ աշխարհովը մեկ բարախող հեղափոխութեան այդ սիրտը հանձնեցին չունկերներին ու կազակներին ավերելու: Նրանց աջակցութեամբ ավերվեց «Պրավդան» և սկսվեց կատաղի հարձակում հեղափոխութեան ձախ թևի դեմ:

Հուլիսյան սրեք. բայ արին պատմութեան նոր եջ: Առաջին անգամն եր, վոր վճռական թեև ժամանակավոր հողթանակ եր տանում հակահեղափոխութեանը: Իշխանութեանն անցավ բուրժուազիայի և զինվորական շտաբի ձեռքը: Մինչ այդ չեղելի խանութեան եր: Մինչ այդ խորհուրդները ձեռքում ահագին ուժ կար: Նրանց թիկունքում կանգնած եյին զինվոր-

ների զինված մասսաները, ազատ ժողովուրդը: Այժմ խորհորդները իրենք իրենց անգոր դարձրին: Զինաթափ անելով բանվորներին, լուծարքի յենթարկելով հեղափոխական գնդերին, կենտրոն բերելով կազակներին, նրանք գրանով կաշկանդեցին իրենց ձեռքերն ու վտարեցը, դարձան բուրժուական կառավարութեան մի ավելյորդ պոչը: Նրանց շղթայակապ արին իրենց բուրժուական կոլլեգաները: Նրանցից սգտվում են, չեքը հարկավոր եր «խաղաղացնել», նրանց վրա թքում են, չեքը նրանք փորձում են բողոքել:

Իշխանութեանը հակահեղափոխութեան ձեռքը հանձնելով և դավաճանելով հեղափոխութեանը, մեշչանականութեան ղեկավարները, եսերներն ու մենչեչանականութեան ղեկավարները, կառավարութեան հավիկները սկսեցին ստորագրել կառավարութեան համարչա բոլոր հակահեղափոխական ձեռնարկներին: Ամարչա բոլոր հակահեղափոխական ձեռնարկներին: Պատմութեան կարմիր գրոշակը դադ րել և ծածանելուց: Նրա փոխարեն սկսել և ծածանել մանվան պատիսեպուչն գրոշակը: Զինվորների ու բանվորների գնդակահարութեաններ, գրաքննութեան, դատական ամբաստանութեաններ, հետախուզութեան, բանտարկութեաններ, արգահատելի ցարական հողվածների վերանորոշում քաղաքական հանցագործների վերաբերչալ կեղտում քաղաքական հանցագործների վերաբերչալ կեղտոտ ախրանկալի ամբաստանութեաններ— հին բեժի մի այս բոլոր գեղեցիկ հատկութեանները ի գործ են զրվում նոր կառավարութեան կողմից, կառավարութեան, վորը կոչված և «փրկելու հեղափոխութեանը», վորը բանտարկում և հեղափոխականներին և ազաա և վորը բանտարկում միխատներին և պրավակատորարձակում ցարական միխատներին և պրավակատորարձակում ցարական միխատներին, վորը հետաձգում և հիմաներին, կառավարութեան, վորը հետաձգում և հիմաներին քիբ ժողովի գումարումը ու նրա փոխարեն այսոր

հրավիրում և հակահեղափոխական «արդունաբերութեան և առևտրի «տուղերի» Մոսկվայի խորհրդակցութունը: Ամրացնելով իր դիրքը չերկրի ներսում, հակահեղափոխութունը անցավ զործողութեան հին ձևերին մնացած բոլոր ասպարեզներում: Ուկրալյինցիների դեմ վճռական ճակատաժարտ սկսվեց վոյ միայն դեկրետներով, այլ և կիրասիր՝ երով: Արձակվում է ֆինլիանդական սեյմը և ռազմական ուժով սպառնում են այն ինքնորոշման իրավունքին, վորը այնքան հանդիսավորութեամբ խոստանում էին պաշտոնական դեկլարացիաներում: Կառավարական դեսպանների միջոցով գաղտնի ինտրիգներ են լարվում Ստոկհոլմում նույնիսկ ամենաչափավոր «սոցիալիստների» հանդիպումը խանգարելու նպատակով:

«Սաղաղութուն առանց աննեկսիալի» ֆորմուլան հանձնված է արխիվին, ու նրա փոխարեն չերևան է չեկել Միլյուեկով- Գուչկովյան այլ ֆորմուլա— «պատերազմ մինչև լիակատար հաղթանակը: Կերնսկին հայտարարում է «վոչնչացնել բալլը և իկներին» լոզունգը և «ոուս ժողովրդի անունից» հեռագրներ և ուղարկում Վիլնեյում կայսեր և Նիկոլայ Ռոմանովի ամենամոտ ազգականին, անգլիական Գեվորգ կայսերը: Սաղաղութուն խորհրդներին և պատերազմ պաշտաներին լոզունգը փոխարինվել է «Ս սղաղութուն պաշտաներին և պատերազմ խորհուրդներին» լոզունգով:

Սակայն վաղաժամ է հակահեղափոխութեան ցընծութունը: Գնդակներով չի կարելի կշտացնել սովյալներին: Կազակների մտրակներով չի կարելի ցամաքեցնել մայրերի ու կանանց արցունքները: Կախաղաններով չեն վերջանա ծով տանջանքները՝ սվինով

չի խաղաղի ժողովուրդը: Գիներալական բացականչութուններով չի դադարի արդունաբերութեան քայքայումը:

Պատմութեան ընդհատակյա ուժերն աշխատում են: Ժողովրդական մասսաների ամենախոր ծոցերում հասունանում է լուռ դժգոհութունը: Գյուղացիներին հող է հարկավոր, բանվորներին՝ հաց, թե մեկին և թե մյուսին՝ խաղաղութուն. Ամբողջ չերկրագնդով մեկ սլանում են մրրկահավերը: Անգլիայում բանվորներն արդեն սկսում են բացարձակ կռիվ կապիտալին սանձահարելու համար: Յրանսիայում զինվորները ագիտացիա են մղում հոգուս խաղաղութեան և հեղափոխութեան, Գերմանիայում անընդհատ խլրտուսներ և գործադուլներ են տեղի ունենում, Ամերիկայում բուրժուազիան սկսում է զնդակահարել պատերազմի դեմ պայքարի դրոշ բարձրացնող սոցիալիստներին: Իսպանիան բռնված է դասակարգերի հեղափոխական պայքարի հրդեհով: Արդեն բոլոր չերկրների ֆինանսիստները գաղտնի ժողովներ են գումարում վրա հասնող փոթորկի մասին մտածելու համար: Վորովհետև նրանք արդեն լսում են բանվորական հեղափոխութեան չերկաթի քայլվածքի ձայնը: Վորովհետև նրանք արդեն տեսնում են անխուսափելին:

Այս մեծ բաղխումների միջոցին մեր կուսակցութունը ընթանում է լայնածածան դրոշակներով: Նա միշտ ամուր է բռնել իրեն ձեռքերում այդ դրոշակները, նա չերբեք չի խոնարհեցրել նրանց բռնակալների և կեղտոտ ամբաստանիչներին, հեղափոխութեան դավաճանների և կապիտալի ծառաների առաջ: Նա առաջիկայում ևս այդ դրոշակները բարձր կպահի

պաշքարեկով սոցիալիզմի և ժողովուրդների չեղբայրու-
թյան համար: Նա այդ կանի, քանի վոր նա գիտի,
վոր սկսվելու և նոր շարժում և հասնելու և հին աշ-
խարհի վախճանի ժամը:

Ուրեմն պատրաստվեցեք նոր ճակատամարտների
համար, մեր քաջարի ընկերներ: Քաջարար, և հան-
գիտ, առանց յենթարվելու դանազան պրովոկացիանե-
րի, կուտակեցեք ձեր ուժերը, կազմակերպեցեք մար-
տական զորասյուներ կուսակցութեան, զրոշակի տակ,
պրոլետարներ և ղինվորներ, մեր զրոշակի տակ, ճընշ-
ված գյուղացիներ:

Կեցցե հեղափոխական պրոլետարիատը.

Կեցցե բանվորների և չքավոր գյուղա-
ցիների դաշինքը.

Կորչի հակահեղափոխությունը և նրա «մոս-
կովյան խորհրդակցությունը.

Կեցցե համաշխարհային բանվորական հեղա-
փոխությունը.

Կեցցե սոցիալիզմը.

Կեցցե Ռուսաստանի Սոց-դեմ. բանվորա-
կան կուսակցությունը (բայլշեիկները).

12 Ոգոստոսի 1917 թ.

Պետրոգրադ.

**Ռ. Ս-դեմ. բան. կուսակցու-
թյան (բայլեվիկները) վեց-
երորդ համագումար:**

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Դասակարգային պաշքարի զարգացումն ու
կուսակցությունների փոխհարաբերությունը՝ իմպեր-
իալիստական պատերազմի պայմաններում, ֆրոնտում
ստեղծված ճգնաժամը և դաշնակից կապիտալից ու-
նեցած կախման ուժեղացումը, Ռուսաստանում հաս-
տատեցին հակահեղափոխական իմպերիալիստական
բուրժուազիայի ղեկատուերա, վորը հենվում և ղին-
վորական հրամանատարական վերին շերտերի քլիքի
վրա և թագնվում և մանր բուրժուական սոցիալիզմի
ղեկավարների հեղափոխական ծածկոցի (շիրմայի)
չետևը:

2. Ցարիզմի տապալումից հետո իշխանությունը
բուրժուազիայի ձեռքն անցավ, շնորհիվ այն հանգա-
մանքի, վոր բուրժուազիան տնտեսապես ուժեղ եր և
քաղաքականապես կազմակերպված: Սակայն, ձգտելով
շարունակել իմպերիալիստական պատերազմը ու ցան-
կանալով պահպանել կապիտալի և կալվածատիրական
հողատիրութեան թալանչիական խոշոր չեկամուտները
բուրժուազիան չեր կարող պահել իշխանությունն իր
ձեռքում, լիակատար քաղաքական ազատութեան և
մասսաների ղինված այն պայմաններում, վոր սվեկ
եր հեղափոխությունը: Պրոլետարիատն ու գյուղա-
ցիությունը կազմակերպվելով, ստեղծելով բանվոր-
ների, Գյուղացիների և Զինվորների խորհուրդներ,

անխուսափելիորեն ձգտում էյին վերջ տալու հանուն կապիտալիստների շահերի ստեղծված իմպերիալիստական սպանդանոցին, սանձահարելու և վերջ դնելու կապիտալիստների կողոպուտին, վորը կատարվում էր գլխավորապես զինվորական կապալների, և կալվածատիրական հողերը գյուղացիներին հանձնելու միջոցով:

Հենց ապրիլի 20—21-ին ստեղծված առաջին ճգնաժամը անխուսափելիորեն կվերջանար բուրժուական ժամանակավոր կառավարության տապալմամբ ու իշխանութունը խաղաղ կերպով կանցներ խորհուրդներին, չեթե խորհուրդների ղեկավարները, եսերներն ու մենչևիկները չփրկեցին կապիտալիստների կառավարութունը, կապելով նրա վիճակի հետ խորհուրդներին, այսպես կոչված կոալիցիոն մինիստրության ձևով:

3. Մանր բուրժուական կուսակցութունների՝ եսերների և մենչևիկների տիրապետութունը գյուղացիության և առհասարակ մանր տնտեսութունների ներկայացուցիչների, ինչպես և բուրժուազիայի ազդեցութունից չազատազրված բանվորների մի մասի վրա, բնականաբար հետևանք էր Ռուսաստանի ազգաբնակչության գերակշռող մասի մանրբուրժուական եության: Վորովհետև այդ մասսան անգիտակցաբար վստահում էր կապիտալիստներին, ուստի բնականաբար մի վորոշ ժամանակ կար, չերբ տարված էյին դասակարգային սուր պայքարը բանվորների և կապիտալիստների, գյուղացիների ու կալվածատերերի խաղաղ համաձայնությամբ փոխարինելու ցնորքով:

4. Այդ կուսակցութունների տիրապետության

միջոցին խորհուրդները անխուսափելիորեն ավելի ու ավելի ընկնում էյին, դադարում էյին ապստամբության որդաններ, վորպես և պետական իշխանության որդաններ լինելուց, իսկ նրանց վորոշումները բնականաբար դառնում էյին լոկ անզոր բանաձևեր և անմեղ ցանկութուններ: Այն ինչ բուրժուազիան այդ միջոցին խաղաղով «սոցիալիստական» մինիստրների հետ, հետաձգում էր Հիմնադիր ժողովի ընտրութունները, ձգձգում էր հողի հանձնումը գյուղացիներին, խանգարում և անուշադրության էր մատնում պայքարը յերկրի ընդհանուր փլուզումի դեմ, խորհուրդների մեծամասնության հավանությամբ նախապատրաստվում էր ֆրոնտում հարձակումը, այսինքն իմպերիալիստական պատերազմը վերսկսելու, և զրանով կաղմակերպում էր հակահեղափոխության ուժերը:

Թանգութունից, փլուզումից և պատերազմի յերկարելուց աճում էր մասսաների դժգոհութունը, վորի շնորհիվ և սրվում էր պայքարը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև. պրոլետարիատը առաջ էր մղում հեղափոխութունը և վճռաբար թշնամի էր իմպերիալիստական պատերազմին:

Դասակարգերի պայքարի այդպիսի սրման պայմաններում, բուրժուազիայի հետ համաձայնողական քաղաքականության ու պատերազմը շարունակելու կողմնակից եսերներն ու մենչևիկները, իրենց հավասարակշռութունը կորցնելով, անխուսափելի կերպով անցան հակահեղափոխական կադետների կողմը ընդդեմ պրոլետարիատի:

Հունիսի 9-ի ճգնաժամի միջոցին Ցերետելին առաջարկում էր զինաթափել Պետրոգրադի բանվոր-

ներին և հեղափոխական գնդերը: Հունիսի 18-ի ցույցը առանձնապես պարզորոշ ցույց տվեց, վոր եսերներն ու մենչեիկները վերջնականապես հեռացել են մասսաների ձգտումներէ: Իսկ յերբ բռնկեց հուլիսի 3-4-ի տարերային շարժումը, յերբ պրոլետարիատի կուսակցութիւնը, կատարելով իր հեղափոխական պարտականութիւնը, անցավ արդարացի կերպով զայրացած և վրդոված մասսաների կողմը, այն ժամանակ եսերներն ու մենչեիկները, վորոնք վերջնականապես կանգնած էին բուրժուազիայի հետ խզելու անհրաժեշտութիւնն առաջ, բաց ամենից շատ էին վախենում այդ խղումից, բացարձակ պաշար սկսեցին հեղափոխական պրոլետարիատի և հեղափոխական գործերի դեմ: Պետրոգրադ կանչվեցին անգիտակից զորքեր, հավանութիւն տվեցին ինտերնացիոնալիստական թերթերի փակմանն ու ավերմանը, հեղափոխական գործերն ու բանվորներին զինաթափ անելուն, Քրոնտում մահապատիժը վերականգնելուն, բայլէիկների բանտարկութիւնը և այլն և այլն:

6. Իրերի աչպիսի ընթացքով պետական իշանութիւնը ներկայումս փաստորին գտնվում է հակահեղափոխական բուրժուազիայի ձեռքում, վորի պաշտպանն է զինվորական քիբը: Այդ իմպերիալիստական զիկտատուրան է, վոր կիրառում է քաղաքական ազատութիւնը քաջբալոդ բոլոր վերև հիշված միջոցները, վոր բռնանում է մասսաների վրա և անխնայ կերպով հալածում է ինտերնացիոնալիստական պրոլետարիատին: Այդ բոլորը կատարվում է վորովհետև խորհուրդների կենտրոնական հիմնարկութիւնը, նրանց կենտրոնական Գործադիր կոմիտեն բոլորովին անզոր և անպորժուհեութիւն մատնված:

Խորհուրդները քայքայվելով, մահվան տագնապն են ապրում, վորովհետև իրենց ձեռքը չառան պետական ամբողջ իշխանութիւնը:

7. Հեղափոխութեան առաջին վերելքի ժամանակ մեր կուսակցութեան քարոզած՝ «իշխանութիւնը խորհուրդներին» լողունգը հեղափոխութեան խաղաղ զարգացման լողոնգ էր, վորով իշխանութիւնը բուրժուազիայի ձեռքից խաղաղ կերպով պետք է անցներ բանվորներին և գյուղացիներին ու աստիճանաբար պետք է վերանային մանր-բուրժուազիայի իլլուզիաները:

Ներկայումս այդ խաղաղ զարգացումը և իշխանութիւնը խաղաղ կերպով խորհուրդներին հանձնելը այլևս անհնարին է, քանի վոր իշխանութիւնն իրականում արդեն անցել է հակահեղափոխական բուրժուազիայի ձեռքը:

Ճիշտ լողունգը ներկայումս կարող է լինել միմիայն հակահեղափոխական բուրժուազիայի զիկտատուրայի լիակատար լիկվիդացիան: Միմիայն հեղափոխական պրոլետարիատը, պաշտպանութիւն ունենալով չքավոր գյուղացիութեան կողմից, կարող է կատարել այդ խնդիրը, վորը և խնդիրն է հեղափոխութեան նոր վերելքի:

8. Այս նոր վերելքի հաջողութիւնը կախված է նրանից, թե բավականաչափ արագ և հիմնավոր կերպով կգիտակցի արդուք ժողովրդի մեծամասնութիւնը, թե մենչեիկների և եսերների քարոզած և պաշտպանած համաձայնողական քաղաքականութեան վրա դրած հուշները վորքան կորստարեր են: Իրերի ընթացքը չափազանց խիստ կերպով տապալում են այդ հուշները:

Կուսակցութիւնը իր վրա պետք է վերցնի առաջապահ մարտիկի դերը հակահեղափոխութեան դեմ մղվող կռվում, յեռանդուն կերպով պետք է պաշտպանի նվաճած ազատութիւններն ու հայտարարական

69
99-1999թ.

կարգով հաստատված իրավունքները, նա պետք է պաշտպանի հակահեղափոխական վտանգություններից բոլոր մասսայական կազմակերպությունները (խորհուրդները, գործարանային կոմիտեները, գինավորական և գյուղացիական կոմիտեները) և առաջին հերթին Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Պատգամավորների խորհուրդները: Բոլոր ուժերով պետք է աշխատի պահպանել և ամրացնել այն բոլոր դիրքերը վոր նվաճել և այդ օրգաններում ինտերնացիոնալիստական թեք: Պաշքարի համար, իր շուրջը խմբելով բոլոր այն տարրերին, վորոնք կանգնած են հակահեղափոխության դեմ հետևողական պայքարի տեսակետի վրա, նա պետք է չեանդուն կերպով պայքարի իր ազդեցությունը մասսայական կազմակերպությունների մեջ ուժեղացնելու նպատակով:

9. Պրոլետարիատը չպիտի լինի թաքիլի բուրժուազիայի պրոֆուկացիային: Բուրժուազիան մեծ ցանկություն ունի ներկա մոմենտին նրան վաղաժամ կովի դուրս բերելու: Նա պետք է իր բոլոր ջանքերը գործադրի իր ուժերը նախապատրաստելու և կազմակերպվելու այն մոմենտի համար, լիքը ընդհանուր ազգային կրիզիսը և մասսալական խորը վերելքը կստեղծեն բարենաշոյ պայմաններ, վորպեսզի քաղաքի և գյուղի չքավորությունը բանվորների կողմնանցնի ընդդեմ բուրժուազիայի:

10. Այդ հեղափոխական դատակարգերի նպատակը պետք է լինի այն հիմնական ժողովելու իր բոլոր ուժերը՝ պետական իշխանությունը իրենց ձեռքը վերցնելու և այն՝ առաջավոր ժողովների հեղափոխական պրոլետարիատին հետ պահանջադրելու խաղաղության և հասարակության սոցիալիստական վերակառուցման նպատակով:



ՀԵՐԱՅԵՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА-ЦЕНТАЛЬНИ



